


Финансовый  
круг из двух кирпичей  
из которых  
один из них



Финансовый

А.И. Пчелов

Краткая

# Этимология

ново-армянского языка

Съ орографическими поясніями и  
практическими упражненіями

Для низших и среднихъ учебн. заведений

3<sup>е</sup> издание

Совѣтомъ Попечителя допущена въ качествѣ учебника  
для низшихъ и среднихъ учебныхъ заведеній Кавк. Уч. Окр.  
(Журн. пост. отъ 26 февр. 1911 г.; отнош. № 545215/Щ, 1911)

ՅԱՐԱԹԻՒՆ ԹՈՒՐԱՆԵԱՆ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱԲՈՐ ԼԵԶԻՒ

Հ Ա Մ Ա Փ Օ Տ

# ՍՏՈՒԳԱԾԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՂԱԳՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՎ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

Ստուգին եւ միջին դպրոցների համար

# ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Совѣтомъ Попечителя допущена въ качествѣ учебника для низшихъ и  
среднихъ учебныхъ заведеній Кавк. Уч. Окр. (Журн. пост. отъ 26/II,  
1911 г.; отнош. № 5452)

Թ. Ե Ֆ Լ Ի Ս

Էլեգ. ապարան Օր. Ն. Աղասիանի, Պօլից. № 7

1911

04 MAY 2010  
ELOS 552A R

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՐԱՆԵԱՆ

91.99-5

թ- 88

**ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՂԵԶԻԻ**

**Հ Ա Մ Ա Պ Օ Տ**


**ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ**

ԹԻԴԱԿՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՎԵԼԻ ԴՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

**Սուրին և միջին դպրոցների համար**

**ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ**

Совѣтомъ Попечителя допущена въ качествѣ учебника для низшихъ и среднихъ учебныхъ заведеній Кавк. Уч. Окр. (Журн. пост. отъ 26/II, 1911 г.; отнош. № 5452)



Թ. Ի Ֆ Լ Ի Ս

Ելեքտ. ապարան Օր. Ն. Աղանեսի, Պոլից. Ն<sup>o</sup> 7

1911

19 APR 2013

6326

491.99-5 20647-59

P-88	Բանակը
Կ. աշխարհական	Հիմքային պահպանութեան աշխարհական
18 ամէց	
1914 20005	26/11/80
VAN 1080	4/11/81



20647-59

## Ա. Ռ. Ջ. Ա. Բ. Ա. Ն

Դասագրքիս արագ սպառւելը հնարաւորութիւն տւառ  
ինձ լոյս ընծայելու գիրքս երրորդ հրատարակութեամբ, որը  
դրեթէ անփոփոխ արտատպութիւն է երկրորդից: Երկրորդ  
հրատարակութիւնը բարեփոխելիս՝ իր ժամանակին նկատի  
են առնւած այն ցուցմունքները, որ արել էր պրօֆեսոր  
Ն. Մառը՝ Կովկասի Ուսումնարանական Շրջանի պ. Հոգա-  
բարձւի յանձնաբարութեամբ: Այդ բարեփոխութիւնից յետոյ՝  
աշխատութիւնն Կովկասի Ուսումնարանական Շրջանի Հոգա-  
բարձական Խորհրդի կողմից (27-ն փետրվարի 1911 թ.,  
№5452) թոյլատրած է, որպէս դասագիրք ստորին և միջին  
դպրոցների համար:

Քերականական դասընթացն աւելի գործնական դարձ-  
նելու համար՝ դասագրքիս մէջ զետեղւած են զանազան  
վարժութիւններ, որոնց շնորհիւ աշակերտը հիմնաւորա-  
պէս իւրացնում է այս կամ այն կանոնը կամ լեզւական  
առանձնայատկութիւնը: Սակայն այդ վարժութիւնները  
զետեղւած են գլխաւորապէս որպէս նմուշ դասատուների  
համար: Յանկալի և աւելի օգտակար է, որ այդ տեսակ  
վարժութիւններն ամեն անգամ կազմւեն աշակերտների  
նոր դասից՝ ուսած յօդւածից կամ ստանաւորից: Թէ հնչիւ-  
նաբանական բաժնում և թէ իւրաքանչիւր բանի մասից  
յետոյ՝ առանձին տեղ է տրւած ուղղագրութեան: Առանձ-  
նապէս ուշագրութիւն է դարձրւած այն գէպքերի վրա,  
որոնք յաճախ սիսալ են պատճառում: Ուղղագրական ընդ-  
հանուր գիտելիքների հետ միասին՝ ի միջի այլոց բացա-  
տրւած են ե, է, ո, օ, լ, ւ, գ, դ, ն, ո, ր և այլ  
տառերի գործածութեան կանոնները և բերւած են այն յա-

Ճախ գործ ածւող արմատական բառերը, որոնք զրւում են է-ով, օ-ով և լ-ով:

Բացի դրանից գրքիս վերջում կայ մի յաւելւած, որտեղ խօսւում է նախաղասութիւնների տեսակների մասին: Իսկ նախաղասութիւնների մանրամասն ուսումնասիրութիւնը և նրանց կապակցութիւնները զետեղւած են իմ «Համաձայնութեան» մէջ:

Որովհետեւ դասագիրքս որոշւած է պետական և հայոց դպրոցների համար, որտեղ միաժամանակ անցնում են թէ հայերէն և թէ ոռւսերէն քերականութիւն, այդ պատճառով էլ, աւելի դիւրութիւն տալու համար՝ իւրաքանչիւր քերականական հայերէն տերմինից յետոյ փակագծում դրւած է նրա ոռւսերէն թարգմանութիւնը:

Թիֆլիսի II հգական, IV արական գիմնազիաների և Առևտրական դպրոցի դասատու:

### Յարութիւն Թումանեան

### ՀՆՉԻՒՆՆԵՐ ԵՒ ՏԱՐԵՐ

§ 1. Ամեն մի խօսք բաղկացած է առանձին հնչիւններից. օրինակ՝ ծառ խօսքի մէջ ծ, ա, ո հընչիւններ են (ձեւու):

Հնչիւնների նշանագրերը կոչւում են տառ կամ զիր (բյուկա): Հնչիւններն արտասանւում են, իսկ տառերը՝ գուտում կամ տպւում. հնչիւնները լուսում են, իսկ տառերը՝ տեսնեում ու կարդացւում:

Հայոց լեզուն ունի 38 տառ՝ ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ռ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ը, ց, ւ, փ, ք, օ, ֆ:

Բոլոր տառերի այս գառաւորութիւնը կոչւում է այրթեն (ազբուկա):

§ 2. Տառերը բաժանւում են երեք կարգի.

- 1) Զայնաւորներ (гласные)՝ ա, ե, է, ը, ի, ո, ու:
- 2) Բաղաձայններ (согласные)՝ բ, դ, զ, թ, ժ, խ, ծ, կ, հ, ճ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ռ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ը, ց, ւ, փ, ք, օ, ֆ:
- 3) Երկարքառներ (двугласные)՝ եա, եօ, իւ (ю), այ, ոյ (уй, ой):

Զայնաւոր տառերն արտասանւում են բաց բերանով (ձայնով) և կարող են գործ ածւել մենակ:

Քաղածայն տառերն արտասանւում են բերանի զանազան մասերն իրար մօտեցնելով և գործ են ածւում միայն ձայնաւորների հետ միասին։ Իսկ երկբարբառները կազմում են երկու տառերի միաւորութիւնից։

Յ տառը երբեմն հնչւում է, ինչպէս կիսաձայն ի (ն). Երբեմն՝ ինչպէս հ. իսկ երբեմն էլ անձայն է մխում (§ 12, բ, ե)։

Հ՝ գրւելով ե-ից յետոյ՝ կազմում է եւ=և։

§ 3. Մեր այբբենի տառերը, բացի հնչիւնական նշանակութիւնից, ունեն և թւական նշանակութիւն. այսպէս, օրինակ՝  $a=1$ ,  $b=2$ ,  $c=3$ ,  $d=4$ ,  $e=5$ ,  $f=6$ ,  $g=7$ ,  $h=8$ ,  $i=9$ ,  $j=10$ ,  $k=11$ ,  $l=12$ ,  $m=13$ ,  $n=20$ ,  $o=21$ ,  $p=22$ ,  $q=25$ ,  $r=29$ ,  $s=30$ ,  $t=40$ ,  $u=50$ ,  $v=60$ ,  $w=70$ ,  $x=80$ ,  $y=90$ ,  $z=100$ ,  $Ճ=151$ ,  $Ճ=200$ ,  $Ա=1000$  և այլն։

Վարժութիւն։—1. Արտագրեցէք հետևեալ ոտանառը, ձայնաւոր տառերի տակ քաշեցէք մի գիծ, իսկ երկբարբառների տակ՝ երկու գիծ։

Ծիծեռնակը բոյն էր շինում,  
Եւ շինում էր, և երգում.  
Ամեն մի շիւղ կպցնելիս՝  
Առաջւան բոյնն էր յիշում։  
Այժմ նորից բոյն էր շինում,  
Եւ շինում էր, և երգում.  
Նա յիշում էր անցած տարին  
Իր սընուցած ձագերին,  
Որոնց ճանապին յափշտակեց  
Արիւնաբու թշնամին։

2. Հայոց տառերով գրեցէք հետևեալը.  
18, 23, 24, 28, 33, 35, 37, 39, 46, 49, 61,  
73, 82, 94, 101, 102, 125, 138, 567, 789, 1907,  
2043, 3000։

### ՎԱՆԿ ԵՒ ԲԱՐ

§ 4. ա) Խօսքի այն մասը, որ միանգամից է արտասանւում, կոչւում է վանկ (СЛОГЪ)։ Վանկը կազմում է մի կամ մի քանի հնչիւնից։ Առանց ձայնաւորի չի կարելի վանկ կազմել։ Սեղան, աշա-լերտ, ուսումնարան։

բ) Եթէ բառի սկզբում կան երկու կամ աւելի բաղաձայն տառեր, վանկելու ժամանակ առաջին բաղաձայնից յետոյ գրւում է ը ձայնաւորը։ Գը-լուխ, Ժը-պիտ, թըռ-չուն, տըրտ-մել։

գ) Եթէ բառի վերջում կայ ն կամ ը, վանկելու ժամանակ այդ տառերը կից բաղաձայնի հետ առանձին վանկ են կազմում։ Բեռըն, դուռըն, մեղըր, փոքըր, ծանըր։

Վարժութիւն։—Վանկեցէք հետևեալ բառերը.

Թանոն, տետրակ, թանաք, գրիչ, սենեակ, պայուսակ, թշնամի, կրկնութիւն, գրչահատ, առաւօտ, եկեղեցի, հիւրասիրել, ընտանիք, իմաստութիւն, օրիորդ, օրացոյց, աշակերտուհի, ովկիանոս, Մարիամ, դառն, խառն, մանր, կարծր, կայսր։

§ 5. Մէկ կամ աւելի վանկը, որ իր մէջ պարունակում է մի որևէ միտք կամ նշանակութիւն,

կոչւում է բառ (слово): — Ձի, տուն, սեղան, մատիտ,  
թանաքաման:

Վանկերի թւին նայելով՝ բառը լինում է.

1) Միավանկ (односложное), ծառ, կով, ուլ,  
քար, մարդ:

2) Բազմավանկ (многосложное), յատակ, պատուհան,  
աշխատասիրութիւն:

§ 6. Բառի այն մասը, որ անփոփոխ է մնում  
և պարունակում է իր մէջ նրա բուն նշանակութիւնը,  
կոչւում է արմատ (корень). օրինակ՝ խօսել, անխօս,  
խօսվ, խօսելիք, բառերի մէջ խօս արմատ է:

Բառի այն մասը, որ գրւած է արմատից յետոյ, կոչ-  
ւում է վերջատրութիւն (окончание). օրինակ՝ խօսել,  
խօսելիք բառերի մէջ ել, ելիք վերջաւորութիւններ են:

Իսկ բառի այն մասը, որ գրւած է արմատից  
առաջ կոչւում է նախածանց (приставка). օրինակ՝  
անխօս բառի մէջ ան նախածանց է:

Արմատական բառը կոչւում է նախատիպ (пер-  
вообразное): Իսկ եթէ նախատիպ բառը սկզբից կամ  
վերջից մասնիկներ է ընդունում, կոչւում է ածան-  
ցեալ (производное). օրինակ՝ հայր նախատիպ բառ  
է, իսկ անհայր, հայրական, հայրաքար, հայրենիք՝  
ածանցեալ

Վարժութիւն: — Հետևեալ նախատիպ բառերից կազմեցէք.  
ածանցեալ բառեր.

Գիր, ջուր, տուն, դաշտ, մարդ, որդի, մայր, քաջ, սէր,  
հոգի:

§ 7. Բառը կազմութիւնով լինում է.

1) Պարզ (простое), որ միացած չէ ուրիշ բա-  
ռի հետ: — Սեղան, տուն:

2) Բարդ (сложное), որ երկու կամ աւելի բա-  
ռից է կազմված: — Սեղանատուն, բարեկամ, առու-  
տուր:

Ինչպէս տեսնում ենք, բարդ բառերը կազմւում  
են ա, ե, ու յօդակապ տառերի օդնութեամբ:

Ծանօթ. — Այդ յօդակապներից ա և ն ձայնաւորները  
կազմում են նախընթաց բառերի ընի վերջին մասը. իսկ  
ուն շաղկապ է:

Մի քանի բարդ բառեր չ'ունեն յօդակապներ: —  
Հացթուխ, ջրկիր, ձեռնտու և այլն:

Վարժութիւն: — Կազմեցէք բարդ բառեր հետևեալ բառերից.  
Դունդ—զօրք, տուն—ժամ, սիրտ—բարի, գիրք—վա-  
ճառել մտնել—լոյս, հանել—պատ, հիւր—սիրել, սէր—մարդ,  
աստիճան —բարձր, պետ—խումբ, թուք—մուր, կեր—խում:

Ե , Է

## ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

### ՄԵԾԱՏԱՐ

§ 8. Ամեն մի տառ գրւում է կամ տպւում երկու ձեռվ՝ մեծատառ (прописная) Ա, Բ, Գ... և փոքրատառ (строчная) ա, բ, գ...

Մեծատառով սկսւում են.

ա) Յատուկ անունները: — Մարդարիտ, Լեոն, Եփրատ, Թիֆլիս, Մասիս:

բ) Ամեն նոր գրութեան առաջին բառը: — Զմեռն էր: Տատին շրջապատեցին թոռները և խնդրեցին, որ մի հէքիաթ ասի: Նա սկսեց:

գ) Ոտանաւորի ամեն մի տողի առաջին բառը: —

Մարի գլխին տիսուր ժպտաց

Ղարաբաղի արևը,

Ջրաբերդի անտառներին

Տըւաւ վերջին բարել:

դ) Քաղաքավարական գրութեան մէջ Դուք, Զեր, Զեզանից... բառերը, սրբազն անուններն ու տիտղոսները: — Արարիչ, Փրկիչ, Նորին Մեծութիւն, Վեհափառ Տէր:

ե) Գրւածքների և պարբերական թերթերի անունները: «Կուածաղիկ» ու «Հացի խնդիր» վէպերը գլւել է Պերճ Պոօշեանը: «Մշակը» լրագիր է: «Աղբիւրն» ու «Հասկերը» մանկական ամսագրեր են:

§ 9. Ե բառի սկզբում հնչւում է, ինչպէս կարճ իէ (ես, երկու, եղբայր), իսկ բառի միջին՝ է (մեծ, գլւեր, ձեռներ):

ա) Բառերի վերջում ե չի գործ ածւում, այլ գրւում է է: — Նունէ, Եւգինէ, Գուցէ, միթէ, ըոպէ, մարգարէ:

բ) Բառերի միջին մեծ մասամբ գրւում է ե, իսկ է քիչ է գործ ածւում: Ուղղագրութեան համար պէտք է սովորել է-ով գրւող բառերը:

է-ով գրւում են հետևեալ յաճախ գործ ածւող բառերը.

Արդէն	Գոմէշ	Խէթ	Նւէր	Վէր (վայր)
Աղէտ	Դէղ	Խէժ	Շէկ	Վէրք
Աղւէս	Դէմ	Ծէս	Շէն	Վրէժ
Անէծք	Դէմք	Կէս	Պատմէն	Տգէտ
Անօրէն	Դէս	Կէտ	Պատնէշ	Տէր
Ապաւէն	Դէպի	Հանդէս	Պատւէր	Տնօրէն
Առնէտ	Դէպք	Հէգ	Պարտէզ	Փէշ
Ասպարէզ	Դէտ	Հրաւէր	Պէս	Փոխարէն
Բգէզ	Երէց	Հրէշ	Զրվէժ	Քարտէզ
Բւէճ	Զէնք	Զէթ	Սէր	Քէն
Դէթ	Թէկուղ	Մէգ	Վէճ	Օրէնք
Գէս	Թէկուշ	Մէկ	Վէպ	
Դէր	Ժապաւէն Մէջ		Վէտ-վէտ	

դ) Է-ով գրւում են այն յատուկ անունները, որոնք վերջանում են էլ, էս, էն: — Միքայէլ, Իսրայէլ, Ռաֆայէլ, Յովհաննէս, Ներսէս, Խորէն, Ռուբէն, Գուրգէն, Կայէն, Սուրէն և այլն:

դ) Է-ով գրւում են այն բառերը, որոնք ունեն

Հետևեալ վերջաւորութիւնները.

Աւա՝ հոտաւէտ, գինեւէտ, խոտաւէտ:  
ըէն՝ հայերէն, ոռւսերէն, համօրէն, վոփարէն:  
դէն՝ ոսկեղէն, մրգեղէն, հողեղէն:  
պէս՝ այսպէս, այդպէս, այնպէս, վերջապէս:  
էք՝ երեխէք, Զրօրհնէք, եկէք, գնացէք.  
էր՝ գրէր, տանէր, խօսէր, ասէր:  
ինչպէս տեսնում ենք, է գլխաւորապէս զրւում  
Էրառերի վերջին վանկում: Բայց կան բառեր, որոնց  
վերջին վանկում զրւում է ե:—Եյստեղ, այն-  
տեղ, ահեղ, զօրեղ, հանճարեղ, ասես, ուտես,  
նես, խօսել, տանել և այն:

Ե) Բառերի միջին՝ ձայնաւորից առաջ սովորա-  
բար զրւում է է:—Խօսէի, խօսէիր, խօսէինք, խօսէ-  
իք, խօսէին, մարգարէանալ, միջօրէական, բոպէա-  
կան, քրիստոնէութիւն, Թագէոս, Մատթէոս, Գէորգ  
և այլն:

Վարժութիւն:—Արտագրեցք հետևեալ յօդւածը և խաչե-  
րի տեղ, ուր հարկաւոր է, զրէք և կամ է.  
×կ×լ×ր գարունը: Աշխ×նն ու Արիստակ×սը շատ  
ուրախ×ին: Բոլոր ×ր×խ×քը գնացին պարտ×զը: Տանը  
միայն միաց Գայիան×ն: Նա դ×ո պիտի պատրաստ×ր իր  
հայ×ր×ն դասը: Ար×գակը ժպտում ×ր վ×րից ու հրա-  
ւ×ր կարգում նրան. «միթէ բաւական չ», ինչքան պարա-  
պ×ցիք. դուրս ×կ, տ×ս ինչպ×ս ուրախ × պարտիզում,  
տ×ս ինչ հոտաւ×տ, ծաղիկն×ր ու ինչ կանաչ×դ×նն×ր  
կան»:—Ոչ, պայծառ ար×ւիկ, մինչ×ւ զործ×ըս չը վ×ր-  
ջացն×մ, ×ս չ×մ կարող տ×ղից շարժէր, վերջապ×ս  
Գայիան×ն սովոր×ց դասը, ×լաւ ս×նեակից ու դիմ×ց  
գ×պի պարտ×զ:

Ո, Օ

§ 10. ա) Ո բառերի սկզբում կարդացւում է լո-  
ինչպէս՝ ոտ, որը, ոսկի, որդի:

Բացառութիւն են կազմում ով, ովկիանոս, ով-  
աննա և այլն, ուր վից առաջ ո հնչւում է օ:

բ) Բառերի միջին ո հնչւում է օ:—Նոր, ձոր,  
բոլոր, հոգոտ:

դ) Բառերի վերջում ո մենակ չի մնում, այլ ըն-  
դունում է յ:—Յետոյ, սիրոյ, երեկոյ, Աստուծոյ:

Բառերի վերջում օ սակաւ է գործ ածւում:—  
Ճօ, օհօ, ծօ, Մկօ, Մարօ, Մարդօ, Խէչօ, Կարօ:

է) Բառերի միջին մեծ մասամբ զրւում է ո, իսկ  
օ քիչ է գործ ածւում: Ուղղագրութեան համար պէտք  
է սովորել օ-ով զրւող բառերը:

Օ-ով գրւող բառերից յաճախ գործ են ածւում սրանք:

Ակօս	Դրօշակ	Կարօտ	Մօտ	Ոսկեզօծ
Ազօթք	Եօթը	Կրօն	Մօր (հայր)	Պաշտօն
Ազօտ	Եղոր	Կօշիկ	Մօրուք	Պօղոս
Ամօթ	Զրոնել	Համառօտ	Յօդւած	Սօս, սօսի
Անօթ	Զօրք	Հետազօտել	Յօժար	Վաղօրօք
Անօթի	Թօշնել	Հզօր	Յօնք	Վառօդ
Առաւոտ	Իրօք	Հօտ	Յօրանջել	Տօթ
Արդեօք	Խելօք	Հօտադ	Յօրինել	Տօն
Արօտ	Խօսք	Հօր (հայր)	Նախօրօք	Տօլ
Արօր	Ծանօթ	Զօն	Նարօտ	Օրօր
Բօթ	Ծղօտ	Ղօղանջել	Նօսր	
Գօտի	Ծնօտ	Ճօշափել	Շօտ	

Բառերի ածանցման ու բարդութեան ժամա-  
նակ օ մնում է անփոփոխ:—Աղօթք, աղօթել, աղօ-

Քասէր: Կրօն, անկրօն, կրօնական, կրօնուսոյց,  
կրօնասէր:

Վարժութիւն:—Արտագրեցէք հետևեալ յօդւածը և խաչե-  
րի տեղ, ուր հարկաւոր է, դրէք ո կամ ո.

Մի քը ձը սղալ զեկաւ Հաս անուն զվ գիւ-  
ղացու մշտ և նքա հետ սկսեց խսել. «Բարի զբացի,  
այս քւանից եկ ապրենք եղբ քը պէս. էլք դու ինձանից  
և քեզանից չը վախենանք: Խը բխս փի խել եմ, էլ  
ծուռ ճանպ զեմ սղալու, չչքի վաս չեմ տալու»:—  
Թէպէտ նքա է ք կաշին, ասաց Հաս ն, բայց հզ գիդ  
առաջւանն է: Ասաց ու մէկ հարւած զվ զլքեց նքան:  
Յետոյ ապահ զվ սկսեց արքք զվ խք ակ սներ ծրել հզ-  
ղի մէջ, վարել, ցանել, քը վերջը ցորեն զվ լցնի իր հզք:

## Ը

§ 11. ա) Ը ձայնաւորը բառի սկզբում և վեր-  
ջում միշտ գրւում է:—Ընկեր, ծառը:

բ) Բառերի միջին բաղաձայների մօտ, ուր լըս-  
ւում է ը, սովորաբար չի գրւում. օրինակ՝ լսւում  
է զըրել, զըրկել, թըշնամի, մըրթմըրթալ, երկընքի,  
խորհըրդի, բայց գրւում է՝ զրել, զրկել, թշնամի  
մըրթմըրթալ, երկնքի, խորհըրդի:

բայց տողադարձի ժամանակ այդ բառերի մէջ ը ձայ-  
նաւորը գրւում է (§ 4, բ):—Գը-րել, զըր-կել, թըշ-  
նամի, մըրթ-մըրթալ և այլն:

գ) Բարդ բառերի միջին, երբ երկրորդ բաղա-  
զըիչ մասն սկսւում է ը-ով, գրւում է ը:—Հատընտիր,  
նորընծայ, դասընկեր, խոչընդոտ, ճակընդեղ:

դ) Բառերի սկզբում ստ, սլ, սկ, սք, սի, սթ,

զզ, զը, շտ կապակցութիւններից առաջ լսւում է  
կարճ ը, բայց չի գրւում:—Ստուգել, սպասել, սկսել,  
սքանչելի, սփոփել, սթափւել, զգոյշ, զբօսնել, շտապել:  
Բացառութիւն են կազմում սփոնել, շփոթ և այլն:

## 3

§ 12. ա) Յ բառի սկզբում կարդացւում է հ:—  
Յատուկ, յայտնի, յիսուն, յարմար:

Բառերի սկզբում յ համեմատաբար աւելի քիչ  
է գրւում, քան թէ հ: Ուղղագրութեան համար պէտք  
է սովորել յ-ով սկսով բառերը:

Յ-ով սկսող բառերից յաճախ գործ են ածւում սրանք:

Յակինթ	Յաջորդ	Յարութիւն Յղանալ	Յորձանք
Յաղթել	Յառել	Յաւելւած	Յղկել
Յաճախ	Յարեաւ	Յաւէտ	Յօրելեան Յուլիս
Յամառ	Յասմիկ	Յաւիտեան	Յունակի
Յայտնի	Յատակ	Յափշտակել Յոգնել	Յուշաբար
Յանդ	Յատուկ	Յեղաշըրջել Յուղել	Յստակ
Յանդիման Յարատեկ	Յենել	Յոյժ	Յօդ, յօդւած
Յանդուցն Յարգել	Յեն (ետ)	Յոյն	Յօժար
Յանկարծ	Յարդ	Յիմար	Յօնք
Յանձնել	Յարկ	Յիշել	Յոպոպ
Յանցանք	Յարձակել Յիսուն	Յորդ	Յօրինել
Յաջող	Յարմար	Յիրաւի	Յորդորել

Բառերի ածանցման ու բարդութեան ժամանակ  
յ մնում է անփոփխ:—Յաղթել, անյաղթ, յաղթա-  
կան, յաղթանդամ:

Բացի սրանից Յ-ով գրւում են շատ յատուկ

անուններ:—Յիսուս, Յուդա, Յովհաննէս, Յովհէփ,  
Յակոբ, Յովհան և այլն:

բ) Բառի միջին և վերջին կարդացւում է, ինչ-  
պէս կէս ի (Ա):—Այգի, հայ, թէյ, նոյ:

գ) Բառի վերջում առ ո ձայնաւորներից յե-  
տոյ սովորաբար գրւում է յ:—Ծառայ, երեխայ, գայ,  
կայ, երեկոյ, յետոյ, սիրոյ:

Բացառութիւն են կազմում.

1. (Դու) ասա, կարդա, գնա, խաղա...

2. Սա, դա, նա, որա, դրա, նրա, սոքա, դոքա,  
Կոքա, սոցա, դոցա, նոցա, իրա, քո:

3. Ահա, հիմա, ապա, աշկարա, այս:

4. Յատուկ անունները՝ Ագելայիդա, Աննա,  
Յուդա, Մուսա, Մոսկա:

5. Օտար անունները՝ փաշա, բօշա, դրամա,  
պիեսա:

դ) Յ վերջացած բազմավանկ բառերը, երբ ի-  
րանցից յետոյ ընդունում են ս, դ, ն, ներ՝ կորցնում  
են յ գիրը:—Ծառաս, ծառադ, ծառան, ծառաներ:

ե) Յ կարդացւում է միայն միավանկ բառերի  
վերջում:—Հայ, բայ, թէյ, նոյ:

Բացառութիւն են կազմում՝ կայ, գայ, տայ, լայ և այլն:

Իսկ բազմավանկ բառերից յետոյ յ համը է մնում.  
օրինակ՝ ծառայ, երեխայ, յետոյ, երեկոյ կարդացւում  
է՝ ծառա, երեխա, յետո, երեկո:

զ) Յ գրւելով առ ո ձայնաւորից յետոյ՝ կազ-  
մում է այ և ոյ (յի, օյ) երկբարբառները (§ 2, 3):—  
Չայն, եղբայր, լոյս, գոյն, հոյակապ, նոյեմբեր:

է) Յատուկ անունների և օտար բառերի վերջին

ա-ից յետոյ յ չի դրւում. իսկ եթէ դրւում է, կար-  
դացւում է:—Արփաչայ, Գեօգչայ, Շանխայ, տրամ-  
ւայ, հարայ:

Վարժութիւն:—Գրեցէք թելադրութեամբ հետևեալը.

Յունիսը և յուլիսը ամառային ամիսներ են: Յարէթը  
Նոյի որդին էր: Ախուրեանի միւս անունն է Արփաչայ: Յա-  
կորը Յովհէփի հայրն էր: Աստուծոյ պահած գառը գայլը  
չի տանիլ: Համբարձումը կարդաց մի հայերէն պօէմա, որ  
կոչւում է «Դալի-Մահրասա»: Աննա, գնա Յովհակիմին ասա,  
որ գայ այստեղ. յետոյ եկ, քեզ մի ընծայ տամ: Մայր ցա-  
մաքը հինգ է՝ Եւրոպա, Ասիա, Աֆրիկա, Ամերիկա և Աւս-  
տրալիա: Աշխարհն ունի չորս կողման՝ արևելք, արևմուտք,  
հիւսիս և հարաւ: Այսօր տեսայ մի քահանայ: Տէր-Յովհան-  
նէսը մեր քահանան է: Մի երեխայ իր հօր հետ այգուց յետ  
էր գալիս տուն: Ահա քո երեխաները գնում են:

ի, վ

206 47-59

§ 13. ա) և կ հնչւում են միատեսակ: Արան-  
ցից վ գրւում է միայն բառի սկզբում և ո ձայնա-  
ւորից յետոյ (վարդ, վէրք, ծով, խոռվել). իսկ միւս  
գէպքերում գրւում է և՝ Հաւ, թեւ, թիւ, հիւնդ,  
հաւատ, առաջօտ, զինւոր, առւակ:

Բարդ բառերի մէջ երկրորդ բաղադրիչի սկզբի  
վ տառը մնում է:—Վարդավառ, օրակար, գրավա-  
ճառ, արագավագ:

բ) Բառի սկզբում ո-ից առաջ վ չի գրւում:—  
Որդի, որբ, ուկի, որսորդ:

գ) և գրւելով ի ձայնաւորից յետոյ, կազմում է  
իւ (յօ) երկբարբառը (§ 2, 3): իւպ, իւր, հիւր, զիւլ:



իւ կարդացւում է իբրև և բառի սկզբում և արմատական բաղաձայնի առաջ (իւդ, հիւմն). իսկ բառի վերջում և ձայնաւորի առաջ կարդացւում է իվ (թիւ, հիւմնդ):

գ) ւ՝ գրւելով ո ձայնաւորից յետոյ, կազմում է ու (յ): — Ուդա, ուլ, թուղթ, ջուր, կատու, լեզու:

ե) Ու երբեմն գործ է ածւում ձայնաւորից առաջ և տառի փոխարէն: — Աստուած, Առըւակ, նուէր, զուարթ:

Բայց այս ձեր մեր այժմեան լեզւում համարեա վերացել է, և ու-ի տեղ՝ գրւում է ւ: — Աստուած, առւակ, նուէր, զուարթ:

Վարժութիւն: — 1. Արտազրեցէք հետեւեալ բառերը և խաչերի փոխարէն, ուր հարկաւոր է, գրեցէք վ կամ ։

×անք, ×ահան, ցա×. կո×, գի×ան, տեսա×, պա-ռա×, բարո×, մատիտո×, գրքո×, զօրա×ար, զօրա×որ, ×արդապետ, ×ասակ, պատի×, առա×օտ, ա×ազ, նա-արդապետ, ասակ, պատի×, առա×օտ, բան×որ, մրգա-×ակ, բոցա×առ, ա×ետիս, թագա×որ, բան×որ, մրգա-×առառ, հաշի×, հո×ի×, տերե×, ձե×, անձրե×ային, թե×ա×որ:

2. Գրեցէք թելադրութեամբ հետեւեալը.

Ծիտը ծառին ծըլւլում է, ծիւ, ծիւ, ծիւ,

Բազէն գլխին պըտըտւում է, վույ, վույ, վույ,

Ծիտը լուց, ծիտը վախեց, վայ, վայ, վայ,

Բազէն թռաւ, բազէն փախաւ, ինչ լաւ էլաւ, հէ, հէ, հէ:

Վարդանն ու վաղարշակը մի օրավար հող վարեցին: Թրսորդը հրացանով մի վարագ սպանեց: Հովեի անկողինը: Վահան վարդապետը առաւօտեան նաւակով ուղևորւեցաւ Սևանայ վանքը: Զօրավարը քաջալերում է զինւորներին:

## Ղ , Խ

§ 14. ա) Ղ բաղաձայններից առաջ սովորաբար հնչւում է իւ. օրինակ՝ գրւում է թուղթ, աղքատ, կեղտ, բայց կարդացւում է թուխթ, ախքատ, կեխտ:

բ) Բաղաձայններից առաջ սովորաբար գրւում է դ, իսկ իւ շատ քիչ է գործ ածւում:

Խ բաղաձայններից առաջ գրւում է հետեւեալ բառերում՝ ախտ, անխախտ, բախտ, երախտիք, ուխտ, ապուխտ, զմբուխտ, պանդուխտ, վախճան, ժխտել, Սանդուխտ, Խոսրովիդուխտ:

գ) Ղ-ից յետոյ ը հնչւում է ինչպէս պ: — Աղբիւր, Եղբայր, ողբալ:

## Ռ , Ր

§ 15. ա) Ուտառը հնչւում է կոշտ, իսկ ը՝ փափուկ:

Ու սովորաբար գրւում է ն բաղաձայնից առաջ: — Թողն, բուղն, նուղն, լեղնային, մեղնել, դաշնութիւն, խաղնուրդ:

Միւս բաղաձայններից առաջ գրւում է ը: — Վարդ, բարձ, արտ, կարձ, զարդ:

Բացառութիւն են կազմում՝ ուղկան, ուղմանալ, խոպոտ, կառք, կոտք և այլն:

բ) Կրկնութիւնով կազմւած բառերի մէջ առաջին ուն ընկնելով բաղաձայնից առաջ, ը-ի է փոխւում: — Բարբառ, մրմուռ, գրգիռ, կոկուալ, թըթուալ:

Բայց երբ հարկաւոր է ցոյց տալ ձայնի սաստկութիւն, երկուսն էլ ո է գրւում: — Մոմոալ, ճըռճռալ, կոկուալ:

Բ, Գ, Դ, Զ, Զ

§ 16. Ծ տառից յետոյ ք, զ, դ, ծ, ջ հնչւում  
են՝ փ, ք, թ, ց, շ. օրինակ՝ որբ, Սարգիս, Վարդան,  
ըաղձր, մըջին կարդացւում են՝ որփ, Սարքիս Վար-  
թան, քարցր, մըջին:

Բ, զ, դ, ծ տառերը հնչւում են իբրև փ, ք,  
թ, ց, շ նաև հետևեալ դէպքերում.

ա) Ձայնաւորից յետոյ:—Գրաբար, թագաւոր, օդ,  
օծ, էջմիածին:

բ) Այ, ոյ երկբարբառներից յետոյ:—Այբեն, այ-  
դի, զոյզ, մոյզ:

դ) Երբեմն մ, ն բաղաձայններից յետոյ:—Համ-  
բուրել, անզամ, անդամ:

### ՏՈՂԱԴԱՐՁԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

§ 17. Բառերի մասերը մի տողից միւսը փոխա-  
դրելու համար՝ պէտք է գիտենալ տողադարձի կա-  
նոնները (правила переноса).

Այդ կանոնները հիմնած են բառերի վանկելու  
վրա և սրանք են.

ա) Երկու ձայնաւորից մէկը մնում է առաջին  
տողում, իսկ երկրորդը փոխադրում է միւս տողը:—  
Էի-ազօր, մի արան, տի-Եղերք:

բ) Երկու միատեսակ բաղաձայններից մէկը մնում  
է առաջին տողում, իսկ միւսը փոխադրում է միւս  
տողը:—Մեղան-ներ, տիկին-ներ, այբ-ըեն:

դ) Եթէ երկու ձայնաւորի մէջ կայ մի բաղաձայն,  
վերջինս անցնում է հետևեալ տողը:—Հո-զի, տա-ըի:

դ) Եթէ երկու ձայնաւորի մէջ կայ երկու բա-  
ղաձայն, վերջիններս իրարից բաժանւում են:—  
Ար-դար, գառ-նուկ:

ե) Եթէ երկու ձայնաւորի մէջ կայ երեք բա-  
ղաձայն, միայն վերջին բաղաձայնն է փոխադրում  
միւս տողը:—Պաշտպան, քաղց-ըութիւն:

զ) Եթէ բառի մէջ երկու կամ երեք բաղաձայնի  
մօտ լսւում է ը, տողադարձի ժամանակ այդ գիրը  
գրւում է: (§ 4, բ, 11, բ,):—Գըլուխ, թղշնամի,  
դա-ողն, մա-սղն:

է) Երկբարբառների գրերը տողադարձի ժամա-  
նակ միմեանցից չեն բաժանւում:—Հայ-ըիկ, գիւ-դում:  
Տողադարձի նշանը կոչւում է ենթամնայ(-). սա  
դրւում է առաջին տողի վերջին:

Վարժութիւն:—Ի՞նչպէս պէտք է վանկել հետևեալ բա-  
ռերը տողադարձի ժամանակ.

Բարի, որդի, աշակերտ, աշակերտուհի, էութիւն,  
այդի, զոյտթիւն, Հայստան, միասին, որդիական, տներ,  
գրիչ, երկնքի, խորհրդաւոր, նշաններով, ամաններ, բարձր,  
բարձրանալ, կրկնել, ընտանիք, ընկեր, թրխիթրխկալ, գրէի,  
խոսէին, գիւղացի, մտերիմ, հարստանալ, սպասել, շտապել,  
շփոթել, սփոել, զբաղւել, սքանչանալ, զգուշանալ:

### ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

§ 18. Այեն մի առանձին միտք, որ արտայայ-  
տում ենք բառերով, կոչւում է նախադասութիւն  
(предложение):—Աշակերտը գրում է, Եկաւ գարունը:  
Օքը տաք է: Սոխակը թռչուն է:

Նախադասութեան մէջ երկու զիսաւոր անդամ-

ներ (главные члены) կան՝ ա) ենթակայ (подлежащее) և բ) ստորոգեալ (сказуемое):

ա) ենթակայ կոչւում է այն գլխաւոր առարկան, որի մասին խօսւում է նախադասութեան մէջ:— Աշակերտը, գարունը, օրը, սոխակը:

բ) Ստորոգեալ կոչւում է այն, ինչ որ ասւում է ենթակայի մասին:— Գրում է, եկաւ, տաք է, թըռչուն է:

Ենթական պատասխանում է ով և ինչ հարցերին, իսկ ստորոգեալը՝ ինչ է անում, ինչ արաւ կամ ինչ կ'անի առարկան, ինչ է լինում, ի՞նչպէս է, ի՞նչ և այն:

Ենթական ստորոգեալից ոչ մի կէտաղը թիւն նշանով չի բաժանւում: Նախադասութեան վերջում դրւում է վերջակէտ(±):

Վարժութիւն: — Արտագրեցէք հետևեալ նախադասութիւնները, քաշեցէք ենթականների տակ մի գիծ, իսկ ստորոգեալների տակ՝ երկու գիծ:

Ել չը խօսեց Արաքսը, յորձանք տւեց ահագին, օդակ-օդակ օձի պէս՝ առաջ սողաց մոլեզին:

Գեղեցկանիստ է Աշտարակ,  
Շատ այգիններ նա ունի.  
Այստեղ երկինքն է կապուտակ,  
Այստեղ օդն է քաղցրալի:  
Այդ սիրուն զիւզն ունի մի գետ,  
Եւ այն լի է ձկներով:

§ 19. Բացի գլխաւոր անդամներից, նախադասութեան մէջ լինում են երկրորդական անդամներ

(второстепенные члены), որոշող կամ յատկացուցիչ (определение), բ) լրացուցիչ (дополнение), գ) պարագայական (обстоятельственный) և դ) կոչական (звательный) բառեր:

ա) Որոշող կամ յատկացուցիչ բառերը պատասխանում են ի՞նչպիսի կամ ո՞րպիսի, ում, ինչի, քանի, ո՞ր հարցերին:— Եղբայրս լաւ (ի՞նչպիսի) մարդ է: Յարեթը նոյի (մւմ) որդին էր: Ծովի (ինչի) ջուրն աղի է: Ես ունիմ երկու (քանի) գիրք: Մարդարիթը առաջին (մը) դասարանումն է: Թիֆլիս (մը) բաղաքը մեծ է:

Վարժութիւն: — 1. Հետևեալ նախադասութիւնների մէջ գտէք յատկացուցիչ բառերը և տակը գիծը քաշեցէք.

Օձի կծածը կը սաղանայ, լեզւի կծածը չի սաղանալ: Ծերանաս, ծերի պատիւն իմանաս: Սուրբ Ծերոսպլ Տարօն գաւառի հացիկ զիւղիցն էր: Մասիսը Հայաստանի ամենաբարձր սարն է: Նրա գագաթը ծածկւած է ձիւնով: Ծեր կիրը կոչւում է Կովկաս: Յակոբն ունէր տասներկու որդի:

2. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն յատկացուցիչ բառեր:

բ) Լրացուցիչ բառերը պատասխանում են՝ ում, ի՞նչ(ը), ի՞նչի, ումնից, ի՞նչից, ումնով, ի՞նչով, հարցերին:— Հայրը սիրում է որդուն (մւմ): Եղբայրն ստացաւ նամակ (ի՞նչ) իր քրոջից (ումնից): Ծնողները միիթարւում են իրանց զաւակներով (ումնով): Նա գրում է մատիտով (ի՞նչմի):

Վարժութիւն: — 1. Գտէք լրացուցիչ բառերը հետևեալ ոտանաւորի մէջ.

Այժմ վախով նա իր ձեռքը Պարզում է անց կացողին.

Այժմ գուրկ է ամեն բանից,  
Չունի անգամ հացի գին:  
Ամենայն օր իր մարմինը  
Անուշահոտ ջրերով  
Լւանում էր, մազը սանրում  
Կրիայի նուրբ սանրով:

2. Հետևեալ նախադասութիւնների մէջ ամեն մի ստորգեալի մօտ գրէք լրացուցիչ բառ.

Ուսուցիչը պատմում է (ի՞նչ): Կայէնն սպանեց (ժւմ): Հարուստն օգնում է (ժւմ): Աշխատասէրն արժանի է (ի՞նչի՞): Գրատախտակի վրա գրում են (ի՞նչի՞): Աղքատը զուրկ է (ի՞նչի՞ց): Երեխան ընծայ ստացաւ (ումնի՞ց): Հայրը մօտեցաւ (ժւմ): Դաշտը զարդարում է (ի՞նչի՞):

գ) Պարագայական բառերը ցոյց են տալիս գործողութեան՝

1. Տեղը պատասխանելով ո՞րանդ, ո՞ւր, ո՞րտեղից հարցերին: Գիւղացին աշխատում է դաշտում (ժրտեղ): Նա դաշտից (ժրտեղից) գնում է տուն (ժւր):

2. Ժամանակը՝ պատասխանելով թըր, մինչեւ թըր, ողջան ժամանակ, ո՞ր ժամանակից, հարցերին:—Մայիսին (Երբ) բացւում է վարդը: Առաւտից (ժրժամանակից) մինչեւ երեկոյ (մինչեւ Երբ) նա կարդում էր:

3. Որպիսութիւնը՝ պատասխանելով ի՞նչպէս, ի՞նչ տեսալ հարցերին:—Սոխակը երգում է անուշակ (ի՞նչպէս):

4. Պատճառը և նպատակը՝ պատասխանելով ի՞նչո՞ւ, ի՞նչի՞ համար, ի՞նչի՞ց հարցերին:—Աշակերտն իր ջանասիրութեան համար (ի՞նչի՞ համար, ի՞նչո՞ւ) պար-

գև ստացաւ: Զկնորսը գնաց ձուկ ըռնելու (ի՞նչո՞ւ): Զուրը սառչում է ցրտից (ի՞նչի՞ց):

Պարագայական բառերը միւս անդամներից ոչ մի կէտով չեն բաժանում:

Վարժութիւն.—1. Գտէք պարագայական բառերը հետեւեալ նախադասութիւնների մէջ.

Մայր Արաքսի ափերով քայլամոլոր գնում եմ,

Հին-հին դարուց յիշատակ ալեաց մէջը պտրում եմ:

Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր:

Մեսրոպը գտաւ հայոց տառերը 406 թւին:

Առաւոտն ամենքը գնում են իրանց գործին:

Անձրւ օրը հաւերին ջուր տւող շատ կը լինի:

2. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն պարագայական բառեր:

դ) Կոչական բառերը ցոյց են տալիս թէ ումն է դիմում խօսողը:—Հայր մեր, Որ երկնքումն ես: Գնա, որդենակ, աշխարհս անցիր, պանծալի անուն մեծի դու ստացիք:

Երբ կոչական բառը դրւած է նախադասութեան սկզբում կամ վերջում, միւս անդամներից բաժանում է ստորակէտով (,): Իսկ երբ դրւած է նախադասութեան միջում, երկու կողմից է ստորակէտառնում:

Կոչական բառերի գլխին դրւում է շեշտ ():—Հայր, որդենակ:

Շեշտը դրւում է նաև հրաման կամ ինդիր պարունակող բառերի վրա:—Գնա, անցիր, ստացիր:

Վարժութիւն:—Հետևեալ նախադասութիւնների մէջ գտէք կոչական ու հրաման կամ խնդիր պարունակող բառերը և

դրէք, ուր հարկաւոր է, շեշտ ու ստորակէտ.

Արի դու արի սիրուն նոր տարի նոր օրեր բեր մեզէ  
եկեք երեխէք եկէք ձեռք ձեռքի տանք պար բռնենք: Արև  
արև եկ եկ զիզի քարին վէր եկ Մանիր մանիր իմ ճա-  
խարակ մանիր սպիտակ մալանչներ: Կարդա այ իմ խելօք  
մանուկ:

### ԲԱՆԻ ՄԱՍԵՐ

§ 20. Ամեն մի առանձին վերցրած բառ կոչւում  
է բանի կամ խօսքի մաս (часть речи).

Բանի մասերը իննը տեսակ են՝

1. Գոյական անուն (имя существительное),
2. Ածական անուն (имя прилагательное),
3. Դերանուն (местоимение),
4. Թւական անուն (имя числительное),
5. Բայ (глаголъ),
6. Մակրայ (наречие),
7. Նախդիր (предлогъ) և յետադիր (послѣлогъ),
8. Շաղկապ (союзъ),
9. Միջարկութիւն (междометие):

Սրանցից առաջին հինգը փոփոխական (изменяемы) են, իսկ վերջին չորսը՝ անփոփոխ (не изменяемы).

### ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

#### Ա. ԱՐԿԱՅ

§ 21. Ամեն մի իր կամ բան, որ ճանաչում ենք  
մեր արտաքին զգայարանքներով (տեսանելիքով, լսե-  
լիքով, ճաշակելիքով, հոտոտելիքով, շօշափելիքով)  
կամ մեր մտքով, կոչւում է առարկայ (предметъ):—  
Գիրք, աշակերտ, քաջութիւն, երկիւղ:

Այն առարկան, որ ճանաչում ենք մեր արտա-  
քին զգայարանքներով, կոչւում է նիւթական (чув-  
ственныи):—Տուն, զանգակ, աղ, վարդ, ձիւն:

Իսկ այն առարկան, որ ճանաչում ենք մեր մըտ-  
քով, կոչւում է մտալոր (умственный):—Ուրախու-  
թիւն, ըոպէ, հոգի:

Վարժումիւն:—Հետևեալ առարկաներից ո՞րն է նիւթա-  
կան և մըր մտաւոր.

Զուր, ծառ, քամի, սառուց, ծաղիկ, աշխատանք, բա-  
րութիւն, մատիտ, ոյժ, եռանդ, փայտ, սէր, սեր, հօտ, հոտ,  
թռչուն, կարծիք, մահ, կատու, կարիք, Աստւած, հրեշտակ,  
երկաթ, բամբակ, կաթ, այզի:

§ 22. Նիւթական առարկան լինում է շնչաւոր  
(одушевленный) և անշունչ (неодушевленный):

Շնչաւոր կոչւում է այն առարկան, որ իր կամ-

Քով կարող է շարժւել և փոխւել մի տեղից միւսը:—  
Մարդ, գաղան, թռչուն:

Իսկ անշունչ կոչում է այն առարկան, որ իր  
կամքով չի կարող շարժւել և փոխւել մի տեղից  
միւսը:—Սեղան, գիրք, քար, փայտ:

Վարժութիւն:—Հետեւալ առարկաներից ո՞րն է շնչաւոր և  
ո՞րն անշունչ.

Զի, աթոռ, գրիչ, հաւ, քանոն, աման, ձուկ, զինուոր,  
հովիւ, ոչխար, կօշիկ, թուղթ, զլխարկ, խոհարար, աղջիկ,  
բաղ, հաց, սագ, տետրակ, վարժապետ, սպայ, պայուսակ,  
ճանձ, նապաստակ, գրչահատ:

### ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ ԵՒ ՆՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ

§ 23. Ամեն մի առարկայի անուն կոչում է  
գոյական (имя существительное):—Երեխայ, ծառ,  
հօտ, Արաքս, բարութիւն:

Գոյական անունները լինում են՝ յատով (соб-  
ственное), հասարակ (нарицательное) և հաւաքական  
(собирательное):

Յատով կոչում են այն անունները, որոնք պատ-  
կանում են միայն մէկ առարկայի:—Թիֆլիս, Արա-  
քս, Կուր, Մարիամ:

Հասարակ կոչում են այն անունները, որոնք պատ-  
կանում են շատ միատեսակ առարկաների:—Թուչուն,  
տետրակ, ծաղիկ:

Հաւաքական կոչում է միասին հաւաքւած միա-  
տեսակ առարկաների ընդհանուր անունը:—Հօտ, ջոկ,  
երամ, գորք:

Վարժութիւն:—Որոշեցէք հետեւալ գոյականների տեսակը  
Արշակ, անտառ, աշակերտ, Մոսկվա, վաշտ, սենեկ,  
շաքար, ալիւր, թանաք, թանաքաման, խումբ, տուն, Բաքու,  
Անի, փողոց, նախիր, Ախուրեան, Ագուլիս, աթոռ, պատկեր,  
Մարգարիտ, մարզարիտ, Եղիսաբէթ, Աղելայիղա, Յարու-  
թիւն, յարութիւն, Շուշան, շուշան, Աստղիկ, աստղիկ:

### ՄԵՌ

§ 24. Գոյական անունները հայոց լեզուում չ'ու-  
նեն քերականակտն սեռ (родъ):

Քերականական սեռ ունեն միայն այն անուն-  
ները, որոնք պատկանում են կին-մարդկանց. սրանք  
վերջանում են՝ ուհի, անուշ և դուխտ:—Աշակերտ-ուհի,  
ուսուցչ-ուհի, հայուհի, Հայկ-անուշ, Վարդ-անուշ,  
Խոսրովի-դուխտ:

Միւս անունների սեռը իմացւում է միայն նշա-  
նակութիւնով. օրինակ՝ հայր, եղբայր, պապ, աքա-  
ղաղ արական (мужеский) սեռի անուններ են. իսկ  
մայր, քոյր, հարս, տատ, մարի, մաքի—իգական  
(женский) սեռի:

### ԹԻՒ

§ 25. Գոյական անուններն ունեն երկու թիւ  
(число) եղակի (единственное) և յոզնակի (мно-  
жественное):

Երբ խօսւում է մի առարկայի մասին, գործ է  
ածւում եղակի թիւ:—Հաւ, պատ, որսորդ, սեղան:

Իսկ երբ խօսւում է երկու կամ աւելի առարկա-  
ների մասին, գործ է ածւում յոզնակի թիւ:—Հաւեր  
պատեր, որսորդներ, սեղաններ:

Յոզնակի թիւը կազմւում է եղակիից, ընդունե-

լով եր կամ ներ վերջաւորութիւնը։ Միավանկ բառերը վերջանում են եր։—Հաւ-եր, ծառ-եր, պատ-եր, տն-եր։

Իսկ բազմավանկ բառերը վերջանում են ներ։—  
Մատիտ-ներ, աշակերտ-ներ, ամանեղէն-ներ։

Մի քանի միավանկ բառեր՝ կորցնելով իրանց արմատական ն վերջաւորութիւնը (օր. ձեռ, ոտ, դուռ, գառ, ձուկ, մուկ և այլն), յոգնակի թւում վերջանում են ներ (ձեռներ, ոտներ, դոներ, գառներ, ձկներ, մկներ և այլն)։

### ՀՈԼՈՎ

§ 26. Առարկաների մէջ եղած յարաբերութիւնները ցոյց տալու համար՝ գոյական անունները փոփոխում են իրանց վերջաւորութիւնները. այդ փոփոխութիւնները կոչւում են հոլով (падежъ):

Հոլովները եօթն են՝

1. Ուղղական (именительный) — ով, ինչ,
2. Հայցական (винительный) ում, ինչ,
3. Սեռական (родительный) — ում, ինչի,
4. Տրական (дательный) — ում, ինչի,
5. Բացառական (отложительн.) — ումից, ինչից,
6. Գործիական (творительный) — ումնավ, ինչնավ,
7. Ներգոյական (мѣстный) — ումնում, ինչնում։

Բացի սրանից կայ և կոշական (звательный) հոլով, որ նման ուղղականին։

Ո՞վ հարցը վերաբերում է շնչաւոր առարկաներին, իսկ ի՞նչ՝ անշունչ առարկաներին։

Գոյական անունների փոփոխութիւնը հոլովով և թւով կոչւում է հոլովով (склонение):

### ՀՈԼՈՎՆԵՐԻ ՎԵՐՋԱԿԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

§ 27. Ուղղական հոլովը եղակի թւում չ'ունի ոչ մի վերջաւորութիւն։ Զանազան անունները միայն բառերի բները։

Իսկ յոգնակի թւում բոլոր անունները վերջանում են եր կամ ներ (§ 25)։

Երբ ընդհանուր միտքը մասնաւորի է փոխում, ուղղական հոլովն ընդունում է ը (ն) յօդը (§ 33)։

Սեռականը եղակի թւում ունի երեք տեսակ կանոնաւոր վերջաւորութիւն՝ ի (հաց-ի), ու (գին-ու), ան կամ եան (ձկ-ան բարութ-եան)։

Սեռականի յոգնակին՝ ընդունելով եր կամ ներ, վերջանում է միշտ ի։ — Հաց-եր-ի, գին-ի-ներ-ի, ձկ ներ-ի բարութիւն-ներ-ի։

Տրականը նման է սեռականին։

Հայցականը սովորաբար նման է ուղղականին։ Բայց բանական առարկաների անունները (հայր, մայր, աշակերտ, զինւոր, խոհաբար), երբ իրանց վերջում ունեն, ս, ո, ն (ը) մասնիկը, հայցականում ընդունում են տրականի վերջաւորութիւն։ — Աշակերտիս, աշակերտիդ, աշակերտին։

Հայցականում տրականի վերջաւորութիւն են ընդունումնաև այն յատուկ անունները, որոնք վերաբերում են մարդկանց։ — Արամին, Մարիամին, Լեոնին։

Բացառականը եղակի վերջանում է ից կամ ուց։ — Հաց-ից, գին-ուց, ձկն-ից, բարութիւն-ից։

Յոգնակին՝ ընդունելով եր կամ ներ, միշտ վերջանում է ից:—Հաց-եր-ից, գինի-ներ-ից, ձկ-ներ-ից,  
բարութիւն-ներ-ից:

Դործիականը եղակիում վերջանում է ով կամ  
եամբ:—Հաց-ով, գին-ով, ձկ-ով, բարութիւն-ով կամ  
բարութ-եամբ:

Յոգնակին՝ ընդունելով եր կամ ներ, միշտ վերջանում է ով:—Հաց-եր-ով, գինի-ներ-ով, ձկ-ներ-ով,  
բարութիւն-ներ-ով:

Ներգոյականը եղակիում վերջանում է ում:—  
Հաց-ում, գին-ում, ձկ-ում բարութիւն-ում:

Յոգնակին՝ ընդունելով եր կամ ներ, ընդունում  
է նոյն ում վերջաւորութիւնը:—Հաց-եր-ում, գինի-  
ներ-ում, ձկ-ներ-ում, բարութիւն-ներ-ում:

Ենչաւոր առարկաների (մանաւանդ մարդկանց)  
անունները ներգոյականում շատ անգամ ընդունում  
են սեռականի վերջաւորութիւն և սէջ բառը:—Մար-  
դու մէջ, աշակերտների մէջ:

### § 28. ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐԻ ԸՆԴԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

Եզակի		Յոգնակի
—	Ա. Հ.	եր, ներ
ի, ու, ան(եան)	Ա. Տ.	» »+ի
ից, ուց	Բ.	» »+ից
ով	Գ.	» »+ով
ում	Ե.	» »+ում

### ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 29. Գոյականներն ունեն երեք հոլովում, որոնք  
որոշում են եղակի սեռականի վերջաւորութիւննե-  
րով (§ 27).

- Ա. հոլովում—ի հաց-ի
- Բ. հոլովում—ու գին-ու
- Գ. հոլովում—ան, եան ձկ-ան, բարութ-եան:

### Ա. ՀՈԼՈՎՈՒՄԸ

(ի)

§ 30. Ա. հոլովման պէս հոլովւում են գոյական-  
ների մեծ մասը:

Եզակի

Ո.	Հ.	ծառ	որսորդ
Ա.	Տ.	ծառ-ի	որսորդ-ի
Բ.		ծառ-ից	որսորդ-ից
Գ.		ծառ-ով	որսորդ-ով
Ե.		ծառ-ում	որսորդ-ում

Յոգնակի

Ո.	Հ.	ծառ-եր	որսորդ-ներ
Ա.	Տ.	ծառ-եր-ի	որսորդ-ներ-ի
Բ.		ծառ-եր-ից	որսորդ-ներ-ից
Գ.		ծառ-եր-ով	որսորդ-ներ-ով
Ե.		ծառ-եր-ում	որսորդ-ներ-ում

Բ. ՀՈԼՈՎՈՒՄ

(ու)

§ 31. Բ. հոլովման պատկանում են այն գոյականները, որոնք եզակի ուղղականում վերջանում են ի:

Ե զ ա կ ի

Ո. Հ.	գինի	ձի
Ո. Տ.	գին-ու	ձի-ու
Բ.	գին-ուց	ձի-ուց
Գ.	գին-ով	ձի-ով
Ն.	գին-ում	ձի-ում

Յ ո գ ն ա կ ի

Ո. Հ.	գինի-ներ	ձի-եր
Ո. Տ.	գինի-ներ-ի	ձի-եր-ի
Բ.	գինի-ներ-ից	ձի-եր-ից
Գ.	գինի-ներ-ով	ձի-եր-ով
Ն.	գինի-ներ-ում	ձի-եր-ում

Գ. ՀՈԼՈՎՈՒՄ

(ան, եան)

§ 32. Գ. հոլովման պատկանում են այն գոյականները, որոնք եզակի սեռականում վերջանում են ան կամ եան: Եան վերջանում են այն գոյականները, որոնք ուղղականում ունեն ին վերջաւորութիւնը:

Ե զ ա կ ի

Ո. Հ.	ձուկ(ն)	բարութիւն
Ո. Տ.	ձկ-ան	բարութիւն
Բ.	ձկն-ից	բարութիւն-ից
Գ.	ձկն-ով	բարութիւն-ով
Ն.	ձկն-ում	բարութիւն-ում

Յ ո գ ն ա կ ի

Ո. Հ.	ձկն-եր	բարութիւն-ներ
Ո. Տ.	ձկն-եր-ի	բարութիւն-ներ-ի
Բ.	ձկն-եր-ից	բարութիւն-ներ-ից
Գ.	ձկն-եր-ով	բարութիւն-ներ-ով
Ն.	ձկն-եր-ում	բարութիւն-ներ-ում

Զուկ բառի պէս են հոլովւում դուռ (դռ-ան), լեառ (լեռ-ան), գարուն (գարն-ան), աշուն (աշն-ան) և այլն:

Ում վերջացած անունները հոլովւում են Ա. և Գ.

հոլովման պէս: — Խոստում — խոստումի կամ խոստման:

Իւն վերջացած գոյականների եզակի գործիականում երբեմն գործ է ածւում գրաբարի եամբ վերջաւորութիւնը: — Բարութիւնը (փոխանակ՝ բարութիւն-ով), ար-եամբ (փոխանակ՝ արիւն-ով):

Յ ո գ ն ա կ ի

§ 33. Յօդ կոչւում է այն մասնիկը, որ՝ դըրելով անւան վերջին՝ տալիս է նրան որոշ նշանակութիւն և նդհանուր միտքը մասնաւորի է փոխում: — Զինորը, մարգարէ-ն, սեղան-ը:

Հ և ն որոշող յօդեր են. սրանցից ը դըւում է բաղաձայն գրերից յետոյ, իսկ նայնաւորներից յետոյ:

Հ յօդը փոխւում է ն-ի, երբ յաջորդ բառը ըստ  
կըսւում է ձայնաւորով:—Զմեռն անցաւ:

Առանց որոշող յօդի՝ անուններն ունեն ընդհանուր միտք:—

Փողոցով զինտր անցաւ:

Սենեակում սեղան է գրւած:

Այս օրինակներում յայտնի չէ՝ թէ խօսքը ո՞ր զինտրի կամ սեղանի մասին է: Զինտր կամ սեղան ասելով՝ հասկանում ենք մի որեիցէ զինտր կամ սեղան: Ուրիշ է, եթէ ասենք՝

Փողոցով անցաւ զինտրը:

Սենեակում գրւած է սեղանը:

Ասելով զինտրը կամ սեղանը, իսկոյն հասկանում ենք, որ խօսքը մի որոշ ու մեզ յայտնի զինտրի կամ սեղանի մասին է:

Կայ և անորոշ յօդ մի, որ գրւում է անունների սկզբում, երբ խօսքը մի մասնաւոր և անծանօթ առարկայի մասին է:—Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր:

§ 34. Յօդ ունեցող գոյականները հոլովում ևն այսպէս.

Եղակի

Ո.	զինտր-ը	սեղան-ը
Ո.	զինտրի-	սեղանի-
Տ.	զինտրի-ն	սեղանի-ն
Հ.	զինտրի-ն	սեղան-ն
Բ.	զինտրից-(ը)	սեղանից-(ը)
Գ.	զինտրով-(ը)	սեղանով-(ը)
Ն.	զինտրում-(ը)	սեղանում-(ը)

Յ ո գ ն ա կ ի

Ո.	զինտրներ-ը	սեղանները-ը
Ո.	զինտրների-	սեղանների-
Տ.	զինտրների-ն	սեղանների-ն
Հ.	զինտրների-ն	սեղանները-ը
Բ.	զինտրներից-(ը)	սեղաններից-(ը)
Գ.	զինտրներով-(ը)	սեղաններով-(ը)
Ն.	զինտրներում-(ը)	սեղաններում-(ը)

Ինչպէս տեսնում ենք, ն յօդը սեղականում բաց է թողնւում: Բացառականում, գործիականում ևներգոյականում ը յօդը շատ անգամ բաց է թողնւում:

Կան զիմորոշ յօդեր ս, դ, որոնք գործ ածւելով անունների հետ միասին, անխտիր մնում են բոլոր հոլովների վերջին:—Մատիտ-ս, մատիտ-դ, մատիտ-ս, մատիտիտ-դ, մատիտով-դ, մատիտից-ս, մատիտից-դ և այլն:

Բանական առարկանների անունները ս, դ, ը (ն) յօդերով և մարդկանց վերաբերող յատուկ անունները հայցականում ընդունում են արականի վերջաւորութիւն (§ 27):

### ԱՆԿԱՆՈՒ ՀՈԼՈՎՈՒՄ

§ 35. Անկանոն կամ զարտուղի կոչւում է այն հոլովումը, որ գուրս է ընդհանուր կանոնից:

Անկանոն կերպով են փոփոխւում, օրինակ՝

կին, քոյր, հայր, մայր, եղբայր, տէր, շուն, տուն  
և այլն:

Անկանոն հոլովող գոյականները եղակի սեռա-  
կանում գլխաւորապէս ունեն ոջ, օ:

Եզակի

Յոգնակի

Ո.	Հ.	Կին	հայր	կանայք	հայրեր
Ս.	Հ.	Կնոջ	հօր	կանանց	հայրերի
Բ.	Կնոջից	հօրից	կանանցից	հայրերից	
Գ.	Լինոջով	հօրով	կանանցով	հայրերով	
Ե.	Կնոջում	հօրում	կանանցում	հայրերում	
	Կնոջմէջ	հօրմէջ	կանանցմէջ	հայրերի մէջ	

Կին բառի պէս եղակի թւում հոլովում են՝ քոյր,  
տէր, ընկեր, աներ, տալ և այլն:

Հայր բառի պէս են հոլովում մայր, եղբայր, սա-  
նահայր, սանամայր, հօրեղբայր և այլն:

Ժամանակ ցոյց տւող անունները, օրինակ՝ օր,  
ցերեկ, գիշեր, ժամ, տարի, ամառ և այլն, բացի կա-  
նոնաւոր հոլովումից՝ ունեն նաև եղակի սեռականում  
ւայ (ուայ) և բացառականում՝ ւանից (ուանից):—Օր-  
ւայ, օր-ւանից, տար-ւայ, տար-ւանից:

Անկանոն են հոլովում սէր և Աստած բառերը,  
որոնք դառնում են՝ սիրոյ, Աստուծոյ, սիրուց, Աս-  
տուծուց և այլն: Այս ձևերից սիրոյ, Աստուծոյ գր-  
բարից են առնւած:

Մարդ եղակիում լինում է՝ մարդու, մարդոն,  
մարդով. կականակիում մարդիկ, մարդկանց, մարդ-  
կանցից և այլն:

Շուն, տուն հոլովում են՝ շան, տան, շնից, տնից,  
շնով, տնով, շնում, տնում (տանը):

### ՓՈԽԻՈՂ ԵՒ ԿՈՐՉՈՂ ԳՐԵՐ

§ 36. Բառերի աճման ժամանակ, վերջին վան-  
կի ի, ու, է ձայնաւորները և եա, եայ, ոյ զրկելով  
շեշտից՝ նւազում են ու սովորաբար փոխւում այսպէս:

ա) ի և ու դառնում են ը, որը սովորաբար չի  
գրւում ( §§ 4, 11, բ), այլ պահպանւում է միայն  
տողադարձի ժամանակ: — Գիրք—գըրքի=գրքի. եր-  
կինք—երկլնքի=երկնքի: Զիր—ջըրի=ջրի. խոր-  
հիլրդ—խորհըրդի=խորհրդի:

բ) է դառնում է ի:—Տէր, տիրոջ, տիրել:

գ) եա երկբարբառը բարդ բառերում կորցնում  
է իր երկրորդ բաղադրիչ մասը: — Սենեակ—սենեկա-  
պետ. մատեան—մատենագիր:

իսկ պարզ բառերում եա մասը է անփոփոխ: —  
Սենեակ, սենեակի, սենեակներ. մատեանի, մատեան-  
ներում և այլն:

դ) եայ դառնում է է:—Քրիստոնեայ—քրիստո-  
նէութիւնը:

ե) ոյ դառնում է ու:— Զգոյշ—զգուշանալ. համ-  
բոյր—համբուրել:

Կան բառեր, որոնց մէջ ի, ու չեն կորչում: —  
Կարծիք—կարծիքի, հայրենիք—հայրենիքի, մայրիկ—  
մայրիկի, անուն—անունի, հեղուկ—հեղուկի, անու-  
անուսի:

Վարժութիւն: — Հոլովեցէք հետեւալ անունները.

Հաւ, հաւը, տունս, երդում, հոլովում, ընկերդ, հայելի,

մատանիս, բանալին, ոտ, ձեռ, անուն, աշուն, արիւն, ձիւն,  
եղ, դուռ, Յարութիւն, յարութիւն, խորհուրդ, ժողովուրդ,  
երկինք, տիկին, կնիկ, աղջիկ, սանահայր, սեր, սէր, քա-  
ջութիւն, զօրութիւն, առաւօտ, գիշեր, ցերեկ, ժամ, մայիս,  
գիր, ձեռագիր, բուն, հաւաբուն:

### § 37. ԳՈՅՑԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ա) Յատուկ գոյական անունները միշտ սկսւում են  
մեծատառով:—Թիֆլիս, Արաքս, Լևոն, Մարգարիտ:

բ) Այն յատուկ անունները, որոնք ուղղակա-  
նում վերջանում են ա, միւս հոլովներում ա-ից յե-  
տոյ ընդունում են յ:—Աննա—Աննայի. Մոսկու—  
Մոսկույում:

գ) Յ վերջացած անունները (փեսայ, երեխայ,  
քահանայ), երբ ընդունում են յօդ կամ յոգնակի  
թւի վերջաւորութիւն, կորցնում են / գիրը:—Փեսան,  
երեխաս, քահանաներ:

Բացառութիւն են կազմում միավանկ բառերը:—  
Հայ—հայը, հայեր. թէյ—թէյս, թէյդ և այլն:

դ) Ժամանակ ցոյց տւող անունների սեռականի  
անկանոն այ վերջաւորութիւնը գրւում է յ-ով:—  
Տարւայ, մայիսայ, օրւայ, ամառւայ:

ե) Մի քանի անուններ յոգնակի ուղղականում  
եր կամ ներ վերջաւորութեան տեղ՝ կարող են ըն-  
դունել զրաբարի վերջաւորութիւնը՝ թ, որ սեռ. հո-  
լովում դառնում է ց:—Որդիք — որդոց, հայը—  
հայոց, յոյնք—յունաց:

զ) Մարդիկ վերջանում է կող:

### ԱՌԱԿԱՆ ԱՆՈՒԻՆ

§ 38. Առարկանների որպիսութիւնը կամ յատ-  
կութիւնը ցոյց տւող բառը կոչւում է ածական  
անոն (имя прилагательное).

Ածականները սովորաբար դրւում են գոյական-  
ներից առաջ և պատասխանում են ինչպիսի՞ և ո՞ր  
հարցերին:—Բարի մարդ, մեծ քաղաք, ոսկէ մատանի,  
զարնանային անձրւ:

Ածականները լինում են երկու տեսակ՝

- 1) Որակական (качественное):—Բարի, մեծ:
- 2) Ցարաքերական (относительное): — Ուկէ,  
զարնանային:

Որակական ածականները ցոյց են տալիս առար-  
կայի բնական որպիսութիւնը, իսկ յարաբերականները՝  
մի առարկայի յարաբերութիւնը միւսի հետ:

Վարժութիւն:—1. Հետեւալնախաղասութիւնների մէջ ո-  
րոշեցէք որակական և յարաբերական ածականները.

Հին Արաքսը զարմանալի քմահաճութիւններ ունէր:  
Անյիշելի ժամանակներից յամառութեամբ կուռում էր իր ան-  
հաւասար եղերքի հետ և, կարծես, զժոռն էր նեղ շաղից:  
Երբեմն երկու լեռնային գօտիներ միաբանում էին և սեղ-  
մում նրան իրանց անձուկ և խորին ձորակի մէջ:

2. Գրեցէք մի քանի ածականներ, որոնք ցոյց տան  
յարաբերութիւն՝ նիւթի, տեղի, ժամանակի և քաշի հետ:

### ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ

§ 39. Արակական ածականներն ունեն երեք համեմատութեան աստիճաններ (степени сравненія):  
1. դրական (положительная), 2. պաղպատական (сравнительная) և 3. զերակրական (превосходная):

1. Դրական աստիճանը ածականի սկզբնական ձեն է:—Արամը խելօք աշակերտ է:

2. Բաղդատական աստիճանը կազմւում է՝  
ա) բառի կամքը) բացառական հոլովի օգնութեամբ:—  
ա) Արամն աւելի խելօք աշակերտ է, քան թէ  
Հայկը:

բ) Արամը Հայկից խելօք աշակերտ է:

Աւելի բառը պահանջում է քան թէ:

Աւելի բառը գործ է ածւում և բացառական հոլովի հետ միասին:—Արամը Հայկից աւելի խելօք է:

3. Գերազրական աստիճանը կազմւում է ամենամասնիկի կամ շատ, սաստիկ, անշափ, բոլորից, ամենից բառերի օգնութեամբ:—

Արամն ամենախելօք աշակերտ է:

Արամը շատ խելօք աշակերտ է:

Արամը բոլորից խելօք աշակերտ է:

Վարժումին:—Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն հետևեալ ածականների բաղդատական և գերազրական աստիճանները.

Բարձր, հաստ, տաք, ծեր, փոքր, հարուստ, աղքատ, ծանր, բարի, գեղեցիկ, հաւատարիմ, ընկերասէր:

### ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 40. Ածականները՝ գոյականի հետ կարւելիս՝  
չեն փոփոխւում:—

### Եղակի

### Յոգնակի

- |       |                |                   |
|-------|----------------|-------------------|
| Ո. Հ. | լաւ աշակերտ    | լաւ աշակերտներ    |
| Ո. Տ. | լաւ աշակերտի   | լաւ աշակերտների   |
| Բ.    | լաւ աշակերտից  | լաւ աշակերտներից  |
| Գ.    | լաւ աշակերտով  | լաւ աշակերտներով  |
| Ն.    | լաւ աշակերտում | լաւ աշակերտներում |

Միայնակ գործ ածականներն ընդունում  
են գոյականի միտք և հոլովում են գոյականների  
Ա. հոլովման պէս:—

### Եղակի

### Յոգնակի

- |       |         |            |
|-------|---------|------------|
| Ո. Հ. | լաւ     | լաւ-եր     |
| Ո. Տ. | լաւ-ի   | լաւ-եր-ի   |
| Բ.    | լաւ-ից  | լաւ-եր-ից  |
| Գ.    | լաւ-ով  | լաւ-եր-ով  |
| Ն.    | լաւ-ում | լաւ-եր-ում |

### § 41. ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1) Այն յարաբերական ածականները, որոնք ցոյց  
են տալիս առարկայի նիւթը, վերջանում են ի, է,  
(եայ), եղէն:—Արծաթ-ի, երկաթ-է, քար-եղէն:

2) Այն ածականները, որոնք գոյականների հետ  
միասին կազմում են մի յատուկ անուն, գրւում են  
մեծատառով:—Կարմիր ծով, Մեռեալ ծով, Նոր աշ-  
խարհ, Արա Գեղեցիկ:

3) Ածականների գերադրական աստիճանում  
ամենա մասնիկը գրւում է բառի հետ միասին:—  
Ամենաքարի, ամենալաւ, ամենամեծ:

Իսկ եթէ ամենա մասնիկի փոխարէն՝ լինում են  
ամենից, ըոլորից, շատ և այլն, այն ժամանակ սրանք,  
իբրև առանձին բառեր, գրւում են ջոկ:—Ամենից բա-  
րի, ըոլորից լաւ:

## Դ Ե Ր Ա Ն Ո Ւ Ն

§ 42. Այն բառերը, որոնք կատարում են գոյա-  
կան և ածական անունների դեր, կոչւում են ղերա-  
նուն (մեստօմուն):—Ես, դուք, այս, աս, որ:

Դերանունները լինում են վեց տեսակ՝

1) Անձնական (личныея)<sup>1</sup> ես (առաջին դէմք), դու<sup>(երկրորդ դէմք)</sup>, նա (երրորդ դէմք):

2) Ցուցական (указательныея)<sup>1</sup> սա, դա, նա, այս,  
այդ, այն և այլն:

3) Հարցական (вопросительныея)<sup>1</sup> ո՞վ, ի՞նչ, ո՞ր  
և այլն:

4) Յարարերական (относительныея)<sup>1</sup> որ, ով որ,  
ինչ որ:

5) Որոշեալ (определительныея)<sup>1</sup> իւրաքանչիւր,  
ըոլոր, ամեն մէկ, ինքը և այլն:

6) Անորոշ (неопределенныея)<sup>1</sup> ոչոր, ոչինչ, ոմն,  
մի քանի և այլն:

Հայոց լեզուում չը կան ստացական (притяжа-  
тельныея) գերանուններ. սրանց տեղ գործ են ածւում  
ես, դու, ինքն գերանունների սեռականը՝ իմ, քո, իւր:

§ 43. Դերանուններն ունեն առանձին մասնիկ-  
ներ՝ ս, դ, ն (ը), որոնք կոչւում են ղերանանական  
յօդեր:

Սրանցից ս ծառայում է առաջին դէմքին, դ՝ երկ-  
րորդ, ն (ը)՝ երրորդ:

Դերանւանական յօդերը գործ են ածւում երեք  
տեսակ դերանունների տեղ.

1) Անձնական: —Վարժապետ-ս, աշակերտ-դ (այ-  
սինքն՝ ես վարժապետ, դու աշակերտ):

2) Ստացական: —Վարժապետ-ս, աշակերտ-դ (այ-  
սինքն՝ իմ վարժապետը, քո աշակերտը):

3) Ցուցական: —Վարժապետ-ս, աշակերտ-դ (այ-  
սինքն՝ այս վարժապետը, այդ աշակերտը):

Վարժութիւն: —Հետեւել ոտանաւորներից ջոկեցէք դե-  
րանունները և որոշեցէք նրանց տեսակը.

Այն հվ է կանգնած ամբիոնի վրայ,  
Դողդոջուն ձեռքերն երկինք ամբարձած,  
Բազմութեան ուշքը դէպի նա դարձած,  
Որին ամենքը հայր են անւանում,  
Որի լոկ խօսքը օրէնք է նոցա...  
Երբ մենք թաթախւած Աղամայ մեղօք,  
Եկանք այս աշխարհ՝ լցւած ցաւերով,  
Ո՞վ մեզ սփոփեց իւր սուրբ խօսքերով.

### ԴԵՐԱՆՈՒԻՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

#### § 44. Անձնական դերանուններ.

Եզակի

Ո.	Ես	Դու	Նա
Ա.	Իմ	Քո	Նրա (նորա)
Տ.	Ինձ	Քեզ	Նրան (նորան)
Բ.	Ինձանից	Քեզանից	Նրանից (նորանից)
Գ.	Ինձանով	Քեզանով	Նրանով (նորանով)
Ե.	Ինձանում	Քեզանում	Նրանում (նորանում)

Յոգնակի

Ո.	Ճենք	Դուք	Նրանք (նորանք)
Ա.	Ճեր	Ճեր	Նրանց (նորանց)
Տ.	Ճեզ	Ճեզ	Նրանց (նորանց)
Բ.	Ճեզանից	Ճեզանից	Նրանցից (նորանցից)
Գ.	Ճեզանով	Ճեզանով	Նրանցով (նորանցով)
Ե.	Ճեզանում	Ճեզանում	Նրանցում (նորանցում)

Նրանք դերանունի տեղ երեքն գործ է ածւում  
դրաբար ձեւ՝ նորա, նոցանից և այլն:

§ 45. Իմ, քո, իւր դերանունները, երբ գոյա-  
կանի հետ միասին են լինում, չեն փոփոխուում: —Իմ  
մատիւր, իմ մատիւի, իմ մատիւին, իմ մատիւից,  
իմ մատիւով, իմ մատիւները և այլն:

Իսկ երբ միայնակ են, ընդունում են ը որոշող  
յօդը և հոլովուում են գոյականների Ա. հոլովման պէս:

Եզակի Յոգնակի

Ո.	Իմը	Իմերը	(իմոնք)
Ա.	Իմի	Իմերի	(իմոնց)
Տ.	Իմին	Իմերին	(իմոնց)
Բ.	Իմը կամ իմին	Իմերը կամ իմերին	(իմոնց)
Գ.	Իմից (ը)	Իմերից (ը)	(իմոնցից)
Ե.	Իմով (ը)	Իմերով (ը)	(իմոնցով)
	Իմում (ը)	Իմերում (ը)	(իմոնցում)

Այսպէս են հոլովուում և քոնք, նրանք, ծերը, մե-  
րը, իրանցը:

Իւր կամ իր դերանունը՝ ընդունելով որոշող յօդ,  
դառնում է իրանք:

§ 46. Յուցական գերանունները սա, դա, նա գործ են ածւում մենակ և հոլովւում են նա անձնականի ձևով (§ 44):

Այս, այդ, այն սովորաբար գործ են ածւում գոյականների հետ միասին և չ'ունեն հոլովական վերջաւորութիւններ:

§ 47. Հարցական գերանունները ՞վ, ի՞նչ միշտ գործ են ածւում մենակ և հոլովւում են այսպէս.

Ե զ ա կ ի

Յ ո զ ն ա կ ի

Ո.	՞վ	ի՞նչ	՞վքեր	ի՞նչեր
Ու.	՞ւմ	ի՞նչի՞		ի՞նչերի՞
Տ.	՞ւմ	ի՞նչի՞	~	ի՞նչերի՞
Հ.	ու՞մ	ի՞նչ	~	ի՞նչեր
Բ.	ումի՞ց	ի՞նչի՞ց	~	ի՞նչերից
Գ.	ումնիվ	ի՞նչնիվ		ի՞նչերնիվ
Ն.	ումնիւմ	ի՞նչնիւմ	~	ի՞նչերնիւմ

Ո՞ր գերանունը գոյականի հետ միասին չի փոփոխում. իսկ երբ մենակ է, ընդունում է ը յօդը և հոլովւում է այսպէս.

Ե զ ա կ ի

Յ ո զ ն ա կ ի

Ո.	որը	որո՞նք
Ու.	որի՞ց	որո՞նց
Տ.	որի՞ն	որո՞նց
Հ.	որի՞ն, որը	որո՞նց
Բ.	որից (ը)	որո՞նցից
Գ.	որնիվ (ը)	որո՞նցնիվ
Ն.	որնիւմ (ը)	որո՞նցնիւմ

Որ, երբ մենակ է, գործ է ածւում և առանց ը յօդի:

§ 48. Յարագերական գերանուններից որ հոլովւում է որ հարցականի պէս, միայն առանց հարցական նշանի:—Որը, որի, որին և այլն:

Իսկ ով որ, ինչ որ գերանուններից որ մնում է անփոփոխ. հոլովւում է միայն ով, ինչ:—Ով որ, ինչ որ, ում որ, ինչի որ, ումնից որ, ինչից որ և այլն:

§ 49. Որոշեալ գերանուններից իրաքանչիւր, ամեն մէկ, ամեն, զոլոր, երբ գոյականի հետ են, չեն հոլովւում. իսկ երբ մենակ են, հոլովւում են գոյականների Ա. հոլովման ձևով:—Իրաքանչիւր, իրաքանչիւրի, իրաքանչիւրից և այլն:

Իրաքանչիւր և ամեն մէկ յոգնակի թիւ չ'ունեն: Ամեն, զոլոր, թէպէտ յոգնականի միտք ունեն, բայց հոլովւում են եզակի:

Եզակի	Յոգնակի
Ո.	ի՞նքը
Ու.	իւր (իր, իրա)
Տ.	իրան
Հ.	իրանից
Բ.	իրանով
Գ.	իրանցով
Ն.	իրանում

§ 50. Անորոշ գերանուններից ոչ ոք, ոչինչ գործ են ածւում մենակ և հոլովւում են միայն եզակի թւում:—Ոչ ոք, ոչ ոքի, ոչ ոքից և այլն, ոչնչի, ոչնչից և այլն:

Ոմն եզակի թւում չի հոլովւում, իսկ յոգնականում դառնում է ոմանք, ոմանց, ոմանցից և այլն:

Մի քանի բոլոր միւս հոլովներում ընդունում է ս մասնիկր:—Մի քանի, մի քանիսի, մի քանիսից և այլն:

§ 51. ԴԵՐԱՆՈՒՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1) Մեղի, մեղը բոլոր հոլովակներում գլուռում են և ովկի—  
Մեղի, ձերի, մերին, ձերին, մերից, ձերից, մերով,  
ձերով և այլն:

Ե գրւում է և մենք, դուք անձնական դերա-  
նունների միւս հոլովակներում:—Մեղ, ձեզ, մեղանից,  
ձեղանից և այլն:

2) Ես, դու, մենք, դուք գերանունների բացա-  
ռական, գործիական և ներգոյական հոլովակներից յա-  
ճախ դուքս է գցւում ա տառը:—Փոխանակ՝ ինձնով,  
քեզանով, մեղանից, ձեղանից և այլն, կարելի է գործ  
ածել ինձնով, քեզնով, մեղնից, ձեղնից և այլն:

3) Սա, դա, նա, սրա, դրա, նրա, սորա, դորա,  
նորա գրւում են առանց յ տառի (§ 12, դ, 2):

4) Հարցական գերանուններից ո՞վ գրւում է  
ո՞վ (§ 10, ա):

Վարժութիւն:—Հետևեալ նախազասութիւններից ջոկեցէք  
գերանունները և որոշեցէք նրանց տեսակն ու հոլովը.

Ով որ փքանայ, շուտով չքանայ: Ով չուստ, նա կուշտ:  
Էս առանց քեզ էլ կարող եմ ստանալ ինձնից փրկութիւն  
դու բնաւ մի՛ յուսալ: Գժի համար ամեն օր կիրակի է:  
Ամեն ծառ իր բարն ունի: Ես տեսայ ձերոնց: Լսել ես ձայն,  
չըգիտես՝ ուր է այն: Գիրքս զնաց տարածւեցաւ մեր երկ-  
րում, ոմանց սիրտը վիրաւորեց, ոմանց տւաւնա բերկում:  
Մեղանից իւրաքանչիւրը պարտաւոր է սովորել իր մայրենի  
լեզուն: Ես՝ իմն ասացի, հիմա դուք գիտէք: Ո՞ր մարդն է  
կոչւում բարի: Բարի կոչւում է այն մարդը, որ լաւութիւն  
է առում ամենքին: Ինչ որ կայ քո գրքում, այն էլ կայ և  
իմում: Ոչ ոք չի ուզիլ, որ իր աչքը կոյր լինի: Ուրիշն հոր  
փորողը ինքը մէջը կ'ընկնի:

ԹԻՌԿԱՆ ԱՆՈՒՆ

§ 52. Թւական անունները ցոյց են տալիս ա-  
ռարկանների քանակութիւնը կամ կարգը (դասը):  
Քանակութիւն ցոյց տևող թւականները կոչւում  
են քանակական (количественные) և պատասխանում  
ենքանի, ո՞րքան կամ ի՞նչքան հարցերին. իսկ կարգցոյց  
տւողները կոչւում են դասական (порядковые) և  
պատասխանում են ո՞ր կամ ո՞րերորդ հարցերին:

Քանակական

1. Մէկ, մի
2. երկու
3. երեք
4. Չորս
5. Հինգ
6. Վեց
7. Եօթը
8. Ութ, ութը
9. Իննը
10. Տասը
11. Տասնումեկ

Դասական

- |                   |           |
|-------------------|-----------|
| Առաջին (մէկերորդ) | Երկորդ    |
| Երրորդ            | Չորրորդ   |
| Չորրորդ           | Հինգերորդ |
| Հինգերորդ         | Վեցերորդ  |
| Վեցերորդ          | Եօթներորդ |
| Եօթներորդ         | Ութերորդ  |
| Ութերորդ          | Իններորդ  |
| Իններորդ          | Տասներորդ |
| Տասներորդ         | Տասնումեկ |

12.	Տասներկու	Տասներկուերուրդ
20.	Քսան	Քսաներորդ
21.	Քսանումէկ	Քսանումէկերորդ
30.	Երեսուն	Երեսուներորդ
40.	Քառասուն	Քառասուներորդ
50.	Ցիսուն	Ցիսուներորդ
60.	Վաթսուն	Վաթսուներորդ
70.	Եօթանասուն	Եօթանասուներորդ
80.	Ութսուն	Ութսուներորդ
90.	Ինըսուն	Ինըսուներորդ
100.	Հարիւր	Հարիւրերորդ
101.	Հարիւր մէկ	Հարիւրմէկերորդ
200.	Երկու հարիւր	Երկուհարիւրերորդ
1000.	Հազար	Հազարերորդ
1000000.	Միլիոն	Միլիոներորդ

Ինչպէս տեսնում ենք, քանակական թւականները, ընդունելով բողոք (երկ-ըորդ, եր-ըորդ, չոր-ըորդ) կամ երորդ (հինգ-երորդ, վեց-երորդ) վերջաւորութիւնները, դառնում են դասական:

Բացառութիւն է կազմում առաջին բառը:

Քանակական թւականներին պատկանում են նաև մասնական թւականները՝ կէս, քառորդ, մէկ հինգերորդական, երեք տասներորդական կամ՝ մէկ հինգերորդ, երեք տասներորդ և այլն:

Թւերի միաւորների կարգը ցոյց տւող թւականները վերջանում են աւոր—Մի-աւոր, տասն-աւոր, հարիւր-աւոր, հազար-աւոր:

§ 53. Թւական անունները, երբ գոյականի հետ միասին են, չեն հոլովւմ: — Հինգ աշակերտ, հինգ աշակերտի, հինգ աշակերտից և այլն:

Թւական անունները, երբ առանց գոյականի են, հոլովւմ են գոյականների Ա. հոլովման ձևով: — Հինգ, հնգի, հնգից և այլն: Հինգերորդ, հինգերորդի, հինգերորդից և այլն:

Ամսաթիւ և տարեթիւ ցոյց տւող թւականները լինում են քանակական: — Զրօրհնէքը լինում է յունասրի վեցին: Ստեփաննոս նազարեանը մեռաւ հազար ութ հարիւր եօթանասուն եւ իննը թւին:

Դար ցոյց տւող թւականները լինում են դասական: — Հինգերորդ գարում Ս. Մեսրոպ գտաւ հայոց տառերը:

#### § 54. ԹիԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1) Թւական անուններից մէկ գրւում է է-ով:

2) Երկու հոլովելիս՝ ընդունում է ս տառը—Երկու-ս-ի, Երկու-ս-ից, Երկու-ս-ով, Երկու-ս-ում:

3) Եօթը և ութը հոլովելիս՝ կորցնում են ը տառը՝ Եօթի, ութի, Եօթից, ութից և այլն:

4) Տասը հոլովելիս՝ ը տառը փոխւում է ն-ի՝ տաս-ն-ի տաս-նի-ց և այլն. իսկ իննը կորցնում է ը տառը՝ իննի, իննից և այլն:

5) Երրորդ և չորրորդ թւականներում գրւում են երկու օ, իսկ միւս բոլոր թւականներում՝ մէկ օ: — Հինգերորդ, վեցերորդ, տասներորդ, հարիւրերորդ և այլն:

6) Առաջին գրւում է չոպ, թէպէտ լսւում է չը

Կարժութիւն:—Թւանշանով գրած թւականները գրեցէք  
տառելով:

$$5+5=10, \quad 10-8=2, \quad 50 \times 5=250, \quad 180 : 9=20,$$

$$\frac{1}{2}, \frac{3}{4}, \frac{1}{7}, \frac{1}{8}, \frac{1}{10}, \frac{7}{100}.$$

Գերճ Պոօշեանը ծնւել է 1837 թւին: Հայր Ղևոնդ Ալի-  
շանը մեռաւ 1901 թ. նոյեմբերի 21-ին: Սմբատ Շահազիզը  
դեռ 10 տարեկան էր, երբ իր հայրենի Աշտարակ գիւղից  
գնաց Մոսկւա:

## Բ Ա Յ

§ 55. Առարկաների գործողութիւնը կամ գրւ-  
թիւնը ցոյց տւող բառերը կոչւում են քայ (լագոլъ):—  
Ուսուցիչը պատմում է (գործողութիւն): Աշակերտը  
նստ սծ է (դրութիւն):

## Ս Ե Ր

§ 56. Բայերն ունեն երեք սկզ (залогъ): Աեր-  
գործական (дѣйствительный), կրատրական (стра-  
дательный) և չզոք (средній):

Ներգործական բայը ցոյց է տալիս այնպիսի  
գործողութիւն, որ գլխաւոր առարկայից անցնում է  
երկրորդականին:—Կայէնը (գլխ. առ.) սպանեց Աբե-  
լին (երկր. առ.):

Կրատրական բայը ցոյց է տալիս այնպիսի  
գործողութիւն, որ մի առարկայ կրում է ուրիշ ա-  
ռարկայից:—Աբէլը սպանեց Կայէնի ձեռքով:

Կրաւորական սեռը միշտ ծագում է ներգործա-  
կանից, ընդունելով և (ու) մասնիկը:

Չզոք բայը ցոյց է տալիս առարկայի դրու-  
թիւնը կամ այնպիսի գործողութիւն, որ մնում է

գործող առարկայի մէջ:—Երեխան քնած է: Աշակերտը զնում է:

Վարժութիւն:—1. Հետևեալ նախադասութիւններից ջոկեցէք բայերը և որոշեցէք նրանց սեռը.

Դեկտեմբերին ձիւն է գալիս ու ծածկում սար ու ձոր: Յունարին դաշտը ծածկում է սպիտակ սաւանով: Ահա եկաւ նոր տարի, հետը բերաւ նոր բարի: Հովիւն անուշ քնի մէջ ինդում է ու ծիծաղում: Աղւէսը պառկեց աղբի տակին, աչքը ձգեց չաղ հաւի ձագին: Խելօք մանուկներ, շուտ հագնւեցէք, շուտով դասատուն դուք հաւաքւեցէք:

2. Հետևեալ նախադասութիւնները փոփոխեցէք այնպէս, որ ներգործական բայերը դառնան կրաւորական.

Ծնողները սիրում են իրանց որդիներին: Մրջիւնը բերնով իր կերն է տանում: Մեղուն ծաղկներից հիւթեր է ծծում: Հնձողներն իրանց մանգաղն են շարժում: Ձկնորսը ծովը ձգեց մեծ ուռկան, հանեց մարմինը սիրուն աղջրկան: Աշակերտը կը հասկանայ իր դասը: Նա կարգում էր հայեցն գիրը:

3. Հետևեալ նախադասութիւնները փոփոխեցէք այնպէս, որ կրաւորական բայերը դառնան ներգործական.

Փայտը կարում է կացնով: Մանուկները դասատուն հաւաքւեցին: Արիւնը արնով չէ լւացւում: Ծառն իր պտղից կը ճանաչի: Կուժը ջրի ճանպին կը կոտրւի: Խաւարը փարատում է լոյսից: Բէլը սպանւեց Հայկի նետից: Մայրը մխիթարում է իր զաւակով:

Ե Դ Ա Ն Ա Կ

§ 57. Բայերն ունեն հինգ եղանակ (наклонение)՝ անորոշ (неопределеннное), սահմանական (изъявительное), հրամայական (повелительное), պայ-

մանական (условное) և ստորադասական (сослагательное).

Անորոշ եղանակը բայի սկզբնական ձևն է և վերջանում է՝ ել (երգ-ել, աս-ել), ալ (ժպտ-ալ, կարդ-ալ), անալ (հասկ-անալ, իմ-անալ):

Կան բայեր (գլխաւորապէս չէզոք), որոնք անորոշ եղանակում վերջանում են իլ (նստ-իլ, ապր-իլ, յոգն-իլ). Բայց մեր այժմեան աշխարհաբար լեզում այդ վերջաւորութեան տեղ գործ է ածում ել:

Սահմանական եղանակը որոշ պատմում է՝ թէ ով և եբբ է կատարում գործողութիւնը:—Սոխակը երգում է: Աշակերտը կարդաց: Ես կը գրեմ:

Հրամայական եղանակն արտայայտում է հրաման, խնդիր կամ խորհուրդ:—Կարդա, այ իմ խելօք մանուկ: Գնա, որդեակ, աշխարհս անցիք, պանծալի անուն մեծի դու ստացիք:

Պայմանական եղանակը ցոյց է տալիս այնպիսի գործողութիւն, որ կարող էր կատարւել, բայց մի որկիցէ պատճառով չի կատարւել:—Կը կարդայի, եթէ ժամանակ ունենայի: Ես դաշտ կ'երթայի, դաշտ Աւարյը:

Ստորադասական եղանակն արտայայտում է կասկած կամ ցանկութիւն գործողութեան կատարւելու մասին:—Եթէ գնամ: Որ տեսնէի:

Վարժութիւն:—Հետևեալ նախադասութիւններից ջոկեցէք բայերը և որոշեցէք նրանց եղանակները.

Լսէ, իմ ծննդ, լսէ, սիրական. հարազատ քոյրս խլեց

իմ փեսան: Անձրկ', անձրկ', ցած արի, բացնւը ցորեն ու գարի: Թէ ևս լինէի հարուստ մեծատուն, շատերի նման ես չէի լինիլ երբէք ազգասէր ունայն խօքերով: Իսկ երրորդ անգամ երբ ցանցը ձգեց, ով կարէ ասել՝ թէ ինչ դուրս հանեց: Ծերն սկսեց կանչել ձկնիկին:

### Ժ Ա Մ Ա Ն Ա Կ

§ 58. Ժամանակը (время) երեք է՝ 1. ներկայ (настоящее), 2. անցեալ (прошедшее) և 3. ապանի (будущее):

1. Ներկայ ժամանակը ցոյց է տալիս այնպիսի գործողութիւն, որ կատարում է այժմ: — Գրում եմ:

2. Անցեալ ժամանակը ցոյց է տալիս անցած գործողութիւնը: Անցեալը լինում է՝ սահմանական, պայմանական և ստորադասական:

Սահմանական անցեալը չորս է՝

ա) Անկատար (несовершенное): — Գրում էի:

բ) Կատարեալ (совершенное): — Գրեցի:

գ) Վաղակատար (предварительное прошедшее): — Գրել եմ, գրած եմ:

դ) Գերակատար (давнопрошедшее): — Գրել էի, գրած էի:

Պայմանական անցեալ (условное прошедшее): — Կը գրէի:

Ստորադասական անցեալ (сослагательное прошедшее): — Եթէ գրէի, որ գրէի:

3. Ապանի ժամանակը ցոյց է տալիս այնպիսի գործողութիւն, որ պիտի կատարվի յետոյ:

Ապանին լինում է՝

ա) Սահմանական: — Կը գրեմ, պիտի գրեմ:

բ) Ստորադասական: — Եթէ գրեմ, որ գրեմ:

Վարժութիւն: — Հետևեալ նախադասութիւններից ջոկեցէք բայերը և որոշեցէք նրանց ժամանակները.

Ծիտը ծառին ծլվում է, բազէն գլխին պտտում է: Զիւն էր գալիս փաթիլ-փաթիլ, հետն էլ անձրկ կաթիլ-կաթիլ. այդ միջոցին մի պառաւ կին հորթ էր փնտրում դաշտի միջին: Արեգակը դուրս է եկել, շողքը հերթից ներս է ընկել: Կը գայ մայրդ, հետը շատ կը բերի քեզ անուշ կաթ: Մանիր թելեր հաստ ու բարակ, որ ես հոգած իմ ցաւեր: Մարդարիտը գնում է ուսումնարան: Լեռնը գնաց տուն: Ես տեսել եմ իմ ընկերոջ: Նա տեսել էր իր վարժապետին: Ուզում էի եղբօրս մի նամակ գրել, բայց ժամանակ չ'ունէի: Թէ տեսնես նորան, ինձնից բարեիր: Կ'երթայինք, թէ կարողանայինք:

### Դ Է Մ Ք

§ 59. Բայերն ունեն երեք դէմք (лицо): առաջին (ես գրում եմ), երկրորդ (դու գրում ես) և երրորդ (նա գրում է):

### Թ Ի Ի

§ 60. Բայերն ունեն երկու թիւ՝ եզակի (գրում եմ, գրում ես, գրում է) և յոզնակի (գրում ենք, գրում էք, գրում են):

## Դ Ե Բ Բ Ա Յ

**§ 61.** Բայերից կազմւում են չորս տեսակ դերայ (причастие): 1. անորոշ, 2. ներկայ, 3. անցեալ և 4) ապառնի:

1. Անորոշ դերբայը բայի սկզբնական ձևն է և ունի անորոշ եղանակի վերջաւորութիւնները՝ ել, ալ, անալ:

Անորոշ դերբայը հայոց լեզուում հոլովւում է գոյականների Բ. հոլովման պէս: — Գրել, գրելու, գրելուց, գրելով, գրելում:

Անորոշ դերբայը, ընդունելով իս վերջաւորութիւնը, ցոյց է տալիս ժամանակ: — Գրել-իս (այսինքն՝ գրելու ժամանակ):

2. Ներկայ դերբայը վերջանում է ող: — Գր-ող:

Այս ձեզ, իբրև բայից կազմւած ածական, գոյականի հետ վարւելիս՝ չի փոփոխւում: — Գրող աշակերտ, գրող աշակերտի, գրող աշակերտից, գրող աշակերտներ և այլն:

Իսկ երբ գործ է ածւում առանձին, հոլովւում է գոյականների Ա. հոլովման պէս: — Գրող, գրողի, գրողն, գրողներ և այլն:

3. Անցեալ դերբայը վերջանում է ած կամ ել: — Գրած, կարդաց-ել:

Անցեալ դերբայը գործ ածւելով նմ և էի բայի

հետ, կազմում է վաղակատար (գրած նմ, գրել նմ) և զերակատար (գրած էի, գրել էի) ժամանակները:

Ած վերջացած դերբայները, գործ ածւելով կը լինէի, լինէի և լինեմ բայի հետ, կազմում են պայմանական և ստորադասական եղանակների բարդ ձևերը: — Գրած կը լինէի (պայման), եթէ գրած լինէի (ստորադաս): Եթէ գրած լինեմ (ստորադաս):

Կը, որ, եթէ, թէ, սթէ որ, թէ որ դրւում են բայից առաջ:

Ած վերջացած դերբայը, իբրև ածական, գոյականի հետ վարւելիս՝ չի փոփոխւում. իսկ մենակ՝ հոլովւում է գոյականների Ա. հոլովման պէս: — Գրած, գրածից, գրածով, գրածներ և այլն:

4. Ապառնի դերբայը վերջանում է ու. — Գրել-ու:

Ապառնի դերբայը գործ ածւելով էի և նմ բայի հետ, կազմում է հաստատական անցեալ և ապառնի ժամանակներ: — Կարդալու էի: Կարդալու նմ:

Ապառնի դերբայը, գործ ածւելով լինէի և լինեմ բայի հետ, կազմում է ստորադասական եղանակի անկատարը և ապառնին: — Գրելու լինէի: Գրելու լինեմ:

Վարժութիւն: — 1. Հետևեալ նախադասութիւններից ջոկեցէք դերբայները և որոշեցէք նրանց տեսակը.

Ամենայն ոք ցանկանում էր լինել նրան բարեկամ: Գիր կարդալով դու զրքերում շատ նորանոր բան կ'իմանաս: Կարդացողի խելքն է կարուել: Նեոյդ ձի հեծած, պեխսոլորած, ձեռս թուր առած՝ ես դաշտ կ'երթայի: Աղօթարանը բացւեցաւ, ժամանակ է զարթնելու. երթամ ախոռ, զոմշուներս լծեմ՝ գութան վարելու:

2. Կազմեցէք դերբայներ հետևեալ բայերից. Սովորել, նայել, կապել, կոտրել, զբօսնել, ննջել, խընդալ, ժպտալ, աղալ, հաճոյանալ, ստրկանալ, զայրանալ, ուլանալ, զլանալ, զարմանալ:

§ 62. ԲԱՅԻ ԶԵՒԵՐԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

ԳՐՈՒՄ	Եմ, ես, է, ենք, էք, են
ԳՐԵԼ	
ԳՐԱԾ	Էի, էիր, էր, էինք, էիք, էին
ԳՐԵԼՌ	
ԳՐ+	(կը, պիտի, եթէ, որ) Եմ, ես, է, ենք, էք, են Էի, էիր, էր, էինք, էիք, էին Եցի, եցիր, եց, եցինք, եցիք, եցին իր, եցէք ոդ ելիս

ԽՈՆԱՐՀՈՒՄ

§ 63. Բայի փոփոխումը եղանակներով, ժամանակներով և թւերով կոչւում խոնարհում (спряжение):

Բայերն ունեն երեք խոնարհում, որոնք որոշում են անորոշ եղանակի վերջաւորութիւններով.

Ա. խոնարհում՝ ել:—Խօս-ել, երգ-ել:

Բ. խոնարհում՝ ալ:—Կարդ-ալ, խնդ-ալ:

Գ. խոնարհում՝ անալ:—Իմ-անալ, զարմ-անալ:  
եՄ և լինել, ԲԱՅԵՐԸ

§ 64. ԵՄ և լինել բայերը կատարում են երկու

տեսակ պաշտօն՝ 1) կամ ցոյց են տալիս առարկայի էռթիւնը կամ գոյութիւնը, 2) կամ օգնում են միւս բայերը խոնարհելու: Առաջին դէպքում այդ բայերը կոչւում են էական (ես եմ, դու կը լինես), իսկ երկրորդ դէպքում՝ օժանդակ կամ օգնական (գրում եմ, կարդացած կը լինես):

Եմ բայը պակասաւոր է, որովհետեւ ունի միայն երկու ժամանակ՝ սահմանականի ներկան և անկատարը:

ՆԵՐԿԱՅ

Եղակի	Եմ,	Ես,	Է:
Յոզնակի	Ենք,	Էք,	Են:

ԱՆՑԵԱԼ ԱՆԿԱՏԱՐ

Եղակի	Էի,	Էիր,	Էր,
Յոզնակի	Էինք,	Էիք,	Էին:

Եմ բայի պակաս ձևերը լրացնում է լինել պակասաւոր բայը. իսկ սրա պակաս ձևերը լրացնում է եղանիմ բայը:

ԱԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ

լինում եմ,	լինում ես,	լինում է,
լինում ենք,	լինում էք,	լինում են:

## Ա Ն Ց Ե Ա Լ Ա Ն Կ Ա Տ Ա Ր

լինում էի, լինում էիր, լինում էր,  
լինում էինք, լինում էիք, լինում էին:

## Ա Ն Ց Ե Ա Լ Կ Ա Տ Ա Ր Ե Ա Լ

եղայ, եղար, եղաւ,  
եղանք, եղաք, եղան:

## Վ Ա Ղ Ա Կ Ա Տ Ա Ր

եղել եմ, եղել ես, եղել է,  
եղել ենք, եղել էք, եղել են:

## Գ Ե Ռ Ա Կ Ա Տ Ա Ր

եղել էի, եղել էիր, եղել էր,  
եղել էինք, եղել էիք, եղել էին:

## Ա Պ Ա Ռ Ն Ի

կը, պիտի՝  
լինեմ, լինես, լինի (է)  
լինենք, լինէք, լինեն:

## Հ Ր Ա Մ Ա Յ Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

եղիր  
եղէք

## Պ Ա Յ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

## Ա Ն Ց Ե Ա Լ

կը, պիտի՝  
լինէի, լինէիր, լինէր,  
լինէինք, լինէիք, լինէին:

## Ս Տ Ո Ր Ա Դ Ո Ս Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

## Ա Ն Ց Ե Ա Լ

եթէ, որ, եթէ (թէ) որ՝  
լինէի, լինէիր, լինէր,  
լինէինք, լինէիք, լինէին:

## Ա Պ Ա Ռ Ն Ի

եթէ, որ, եթէ (թէ) որ՝

լինեմ, լինես, լինի (է),  
լինենք, լինէք, լինեն:

## Դ Ե Ր Բ Ա Յ

Անորոշ՝ լինել,  
ներկայ՝ եղող,  
Անցեալ՝ եղած, եղել,  
Ապառնի՝ լինելու:

§ 65. Ա. ԽՈՆԾՐՀՅՈՒՄ

(Ե)

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ն Ե Ր Կ Ա Յ

Խօսում եմ, Խօսում ես, Խօսում է,  
Խօսում ենք, Խօսում էք, Խօսում են:

Ա Ն Ց Ե Ա Լ Ա Ն Կ Ա Տ Ա Ր

Խօսում էի, Խօսում էիր, Խօսում էր,  
Խօսում էինք, Խօսում էիք, Խօսում էին:

Ա Ն Ց Ե Ա Լ Կ Ա Տ Ա Ր Ե Ա Լ

Խօսեցի, Խօսեցիր, Խօսեց,  
Խօսեցինք, Խօսեցիք, Խօսեցին:

Վ Ա Ղ Ա Կ Ա Տ Ա Ր

Խօսել եմ, Խօսել ես, Խօսել է,  
Խօսել ենք, Խօսել էք, Խօսել են:

Գ Ե Բ Ա Կ Ա Տ Ա Ր

Խօսել էի, Խօսել էիր, Խօսել էր,  
Խօսել էինք, Խօսել էիք, Խօսել էին:

Ա Պ Ա Ռ Ն Ի

Կը, պիտի՝

Խօսեմ, Խօսես, Խօսի (է)  
Խօսենք, Խօսէք, Խօսեն:

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Խօսիր,  
Խօսեցէք:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Ն Ց Ե Ա Լ

Կը, պիտի՝  
Խօսէի, Խօսէիր, Խօսէր,  
Խօսէինք, Խօսէիք, Խօսէին:

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Ն Ց Ե Ա Լ

Եթէ, որ, Եթէ որ՝  
Խօսէի, Խօսէիր, Խօսէր,  
Խօսէինք, Խօսէիք, Խօսէին:

Ա Պ Ա Ռ Ն Ի

Եթէ, որ, Եթէ որ՝  
Խօսեմ, Խօսես, Խօսի (է)  
Խօսենք, Խօսէք, Խօսեն:

## ԴԵՐԲԱՅ

Անորոշ՝ խօսել,  
Ներկայ՝ խօսող,  
Անցեալ՝ խօսած, խօսել,  
Ազառնի՝ խօսելու:

§ 66. Բ. ԽՈՆԱՐՀՈՒՄ

(ալ)

## ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ

Կարդում եմ, Կարդում ես, Կարդում է,  
Կարդում ենք, Կարդում էք, Կարդում են:

ԱՆՑԵԱԼ ԱՆԿԱՆԱՐ

Կարդում էի, Կարդում էիր, Կարդում էր,  
Կարդում էինք, Կարդում էիք, Կարդում էին:

ԱՆՑԵԱԼ ԿԱՆԱՐԵԱԼ

Կարդացի, Կարդացիր, Կարդաց,  
Կարդացինք, Կարդացիք, Կարդացին:

ՎԱՂԱԿԱՆԱՐ

Կարդացել եմ, Կարդացել ես, Կարդացել է,  
Կարդացել ենք, Կարդացել էք, Կարդացել են:

## ԳԵՐԱՐ

Կարդացել էի, Կարդացել էիր, Կարդացել էր,  
Կարդացել էինք, Կարդացել էիք, Կարդացել էին:

ԱՊԱՌՆԻ

կը, պիտի՝

Կարդամ, Կարդաս, Կարդայ,  
Կարդանք, Կարդաք, Կարդան:

## ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Կարդահ,  
Կարդացէք:

## ՊԱՅՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ԱՆՑԵԱԼ

կը, պիտի՝

Կարդայի, Կարդայիր, Կարդար,  
Կարդայինք, Կարդայիք, Կարդային:

## ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ԱՆՑԵԱԼ

եթէ, որ, եթէ որ՝

Կարդայի, Կարդայիր, Կարդար,  
Կարդայինք, Կարդայիք, Կարդային:

Ա. Պ. Ա. Ռ. Ն. Ի.

Եթէ, որ, Եթէ որ՝

կարդամ,	կարդաս	կարդայ,
կարդանք,	կարդաք,	կարդան:

ԴԵՐԲԱՅՑ

Անորոշ՝ կարդալ,  
Ներկայ՝ կարդացող,  
Անցեալ՝ կարդացած, կարդացել,  
Ազառնի՝ կարդալու:

§ 67. Գ. ԽՈՆԱՐՀՈՒՄ

(անալ)

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ն Ե Ր Կ Ա Յ

հասկանում եմ, հասկանում ես, հասկանում է,  
հասկանում ենք, հասկանում էք, հասկանում ենք

ԱՆ ՑԵԱԼ ԱՆ ԿԱՏԱՐ

հասկանում էի, հասկանում էիր, հասկանում էր,  
հասկանում էինք, հասկանում էիք, հասկանում էինք

Ա. Ն Ց Ե Ա. Լ Կ Ա. Տ Ա. Բ Ե Ա. Լ

հասկացայ,	հասկացար,	հասկացաւ,
հասկացանք,	հասկացաք,	հասկացան:

Վ. Ա. Դ. Ա. Կ Ա. Տ Ա. Բ

հասկացել եմ,	հասկացել ես,	հասկացել է,
հասկացել ենք,	հասկացել էք,	հասկացել ենք,

Գ Ե Ր Ա. Կ Ա. Տ Ա. Բ

հասկացել էի,	հասկացել էիր,	հասկացել էր,
հասկացել էինք,	հասկացել էիք,	հասկացել էինք:

Ա. Պ. Ա. Ռ. Ն. Ի.

կը, պիտի՝	կը, պիտի՝	կը, պիտի՝
հասկանամ,	հասկանաս,	հասկանայ,
հասկանանք,	հասկանաք,	հասկանան:

ՀՐԱՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

հասկացիր,  
հասկացէք:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա. Ն Ց Ե Ա. Լ

հասկանայի,	հասկանայիր,	հասկանար,
հասկանայինք,	հասկանայիք,	հասկանայինք:

Կ Ը, Պ Ի Թ Ի

ԱՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Ն Ց Ե Ա Լ

Եթէ, որ, եթէ որ

հասկանայի,  
հասկանայինք,

հասկանայիր,  
հասկանայիք,

Ա Պ Ա Ռ Ն Ի

Եթէ, որ, եթէ որ

հասկանամ,  
հասկանանք,

հասկանաս,  
հասկանաք,

ԳԵՐԲԱՅ

Անորոշ՝ հասկանալ,  
Ներկայ՝ հասկացող,  
Անցեալ՝ հասկացած, հասկացել,  
Ապանի՝ հասկանալու:

ԿՐԱՒՈՐԱԿԱՆ ԲՈՅԵՐ

§ 68. Բոլոր ներգործական բայերը, ընդունելով  
և (ու), դառնում են կրաւորական (§ 56) և խոնարհ-  
ուում են ներգործական բայերի պէս:— Գրւում եմ,  
գրւում էի, գրւեցի, կը գրւեմ եայլն:

ԲՈՅԱՍԱԿԱՆ ԲՈՅԵՐ

§ 69. Ամեն մի բայ բացասական (отрицатель-  
ный) դարձնելու համար սկզբից աւելացնում ենք չը  
կամ չ: — Զը խօսել. չեմ խօսում:

Բացասական բայի ձևերը կազմելու համար կա-  
րևոր է գիտենալ եմ պակասաւոր բայի բացասականը:

Ն Ե Բ Կ Ա Յ

Եզակի չեմ, չես, չի (չէ):  
Յոզնակի չենք, չէք, չեն:

Ա Ն Կ Ա Տ Ա Ր

Եզակի չէի, չէիր, չէր:  
Յոզնակի չէինք, չէիք, չէին:

§ 70. Բացասական բայերը խոնարհուում են հե-  
տեւեալ ձևով:

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ն Ե Բ Կ Ա Յ

Չեմ խօսում, չես խօսում, չի խօսում,  
չենք խօսում, չէք խօսում, չեն խօսում:

Ա Ն Ց Ե Ա Լ Ա Ն Կ Ա Տ Ա Ր

Չէի խօսում, չէիր խօսում, չէր խօսում,  
չէինք խօսում, չէիք խօսում, չէին խօսում:

Ա. Ն Ց Ե Ա. Լ Կ Ա. Տ Ա. Բ Ե Ա. Լ

Հը լիօսեցի, Հը լիօսեցիր, Հը լիօսեց,  
Հը լիօսեցինք, Հը լիօսեցիք, Հը լիօսեցին:  
Վ. Ա. Դ. Ա. Կ Ա. Տ Ա. Բ

Հեմ լիօսել, Հես լիօսել, Հի լիօսել,  
Հենք լիօսել, Հէք լիօսել, Հեն լիօսել:

Գ Ե Բ Ա. Կ Ա. Տ Ա. Բ

Հէի լիօսել, Հէիր լիօսել, Հէր լիօսել,  
Հէինք լիօսել, Հէիք լիօսել, Հէին լիօսել:

Ա. Պ Ա. Ռ Ն Ի

Հեմ լիօսի, Հես լիօսի, Հի լիօսի,  
Հենք լիօսի, Հէք լիօսի, Հեն լիօսի:

Կամ՝

պիտի չը լիօսեմ, պիտի չը լիօսես, պիտի չը լիօսի,  
պիտի չը լիօսենք, պիտի չը լիօսէք, պիտի չը լիօսեն:

Կամ թէ՝

Հը պիտի լիօսեմ, Հը պիտի լիօսես, Հը պիտի լիօսի...

ՀՐԱՄՈՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

մի լիօսիր (լիօսիլ),  
մի լիօսէք (միք լիօսիլ):

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա. Ն Ց Ե Ա. Լ

Հէի լիօսիլ, Հէիր լիօսիլ, Հէր լիօսիլ,  
Հէինք լիօսիլ, Հէիք լիօսիլ, Հէին լիօսիլ:

Կամ՝

պիտի չը լիօսէի, պիտի չը լիօսէիր, պիտի չը լիօսէր,  
պիտի չը լիօսէինք, պիտի չը լիօսէիք, պիտի չը լիօսէին:

Կամ թէ՝

Հը պիտի լիօսէի, Հը պիտի լիօսէիր, Հը պիտի լիօսէր...

ՍՏՈՐԱԴԱՍՄԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա. Ն Ց Ե Ա. Լ

եթէ, որ, եթէ որ՝

Հը լիօսէի, Հը լիօսէիր, Հը լիօսէր,  
Հը լիօսէինք, Հը լիօսէիք, Հը լիօսէին:

Ա. Պ Ա. Ռ Ն Ի

եթէ, որ, եթէ որ՝

Հը լիօսեմ, Հը լիօսես, Հը լիօսի,  
Հը լիօսենք, Հը լիօսէք, Հը լիօսեն:

### ԴԵՐԲԱՅՑ

Ահոքոշ՝ չը խօսել,  
Ներկայ՝ չը խօսող,  
Անցեալ՝ չը խօսած,  
Ապառնի՝ չը խօսելու:

Վարժութիւն:—1. Հետևեալ նախադասութիւններից ջոկեցէք բացասական բայերը և որոշեցէք նրանց ձևերը.

Դու գեռ ծովը չը հասած, սգաւոր ես ինձ նման: Ել չը խօսեց Արաքսը, յործանք տւեց ահազին: Նա չը գիտէր՝ Բնչ ասել է կարօտութիւն արծաթի. այժմ զրկւած ամեն բանից, չունի անգամ հացի գին:

2. Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ բացասական բայերով.

Չիմանալ, չ'ասել, չը յուսալ, չը խնդալ, չը մնալ  
չ'աշխատել, չը տեսնել, չը վախենալ, չը զայրանալ, չ'երգել  
չը հաւաքւել, չը լւացւել, չը գրել, չը նստել, չը պառկել:

### ԴԵՐԲԱՅՑՆԵՐԻՑ ԿԱԶՄԻԱԾ ԲԱՂԱԴՐԵԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

§ 71. Ժամանակները գերբայներից կազմւում են եմ և լինել պակասաւոր բայերի օգնութեամբ: Դերբայներից կազմւած ժամանակներն են՝

### Վաղակատար

Խօսած (խօսել)	
Հասկացած (հասկացել)	Եմ, ես, է, ենք, էք, են:
Կարդացած (կարդացել)	

### ԴԵՐԱԿԱՏԱՐ

Խօսած (խօսել)	
Կարդացած (կարդացել)	Էի, էիր, էր, էինք, էիք, էին:
Հասկացած (հասկացել)	

### Ապառնի

Խօսելու	
Կարդալու	Եմ, ես, է, ենք, էք, են:
Հասկանալու	

### Անցեալ

Խօսելու	
Կարդալու	Էի, էիր, էր, էինք, էիք, էին:
Հասկանալու	

### Անցեալ-ապառնի

Խօսած	
Կարդացած	Կը լինեմ, կը լինես, կը լինի և այլն:
Հասկացած	

### Պայմանական անցեալ

Խօսած	
Կարդացած	Կը լինէի, կը լինէիր և այլն:
Հասկացած	

### Ստորադասական կատարեալ եթէ, որ՝

Խօսած	
Կարդացած	Լինիմ, լինիս, լինի և այլն:
Հասկացած	

### Ստորադասական գերակատար եթէ, որ՝

Խօսած	
Կարդացած	Լինէի, լինէիր, լինէր, և այլն:
Հասկացած	

## Ա Ն Ց Ո Ղ Ա Կ Ա Ն Բ Ա Յ Ե Բ

§ 72. Անցողական (побудительный) կոչւում են այն բայերը, որոնք ցոյց են տալիս ուրիշին մի բան անել տալը:

Ներգործական և չէզոք բայերը կարելի է անցողական դարձնել, եթէ նրանց կատարեալ ժամանակում ցից յետոյ աւելացնենք նել (—անել): — Կարդացնել, խօսեցնել, նստեցնել, զարթնեցնել: —

Իսկ նել և չել վերջացած բայերը, որոնք կատարեալ ժամանակում չ'ունեն ց, անցողական դառնալիս՝ ն և չ մասնիկների փոխարէն ընդունում են ցն: —

Մտնել — մտցնել, փախչել — փախցնել:

Մի քանի նել վերջացած բայեր դառնում են անցողական տալ բայի օգնութեամբ: —

Գտնել — գտնել տալ, տանել — տանել տալ:

Ներգործական բայը տալ բայի հետ միասին կարող է գործ ածւել անցողականի տեղ: — Կարդալ տալ, զրել տալ: Սոսկալի զէնքը բռնած մեր գլխին՝ կով տալ է տալիս արտասունք առատ:

Իսկ եթէ տալ բայն աւելացնենք անցողական բային, կըստանանք կրկին անցողական: — Կարդացնել տալ, խօսեցնել տալ:

Վարժութիւն: — Գրեցէք մի քանի նախաղասութիւններ հետեւալ անցողական բայերով.

Նստեցնել, սովորեցնել, բարկացնել, հասկացնել, ապրեցնել, մտցնել, հանգստացնել տալ, վախեցնել տալ:

## Ա Ն Դ Է Մ Բ Ա Յ Ե Բ

§ 73. Անդէմ (безличный) կոչւում են այն

բայերը, որոնք գործ են ածւում միայն եզակի երրորդ գէմքով: — Պէտք է, հարկ է, բաւական է, վայել է և այլն:

Կան չէզոք և կրաւորական բայեր, որոնք գործ են ածւում անդէմի մտքով: — Երկում է, թւում է, մնում է, ասւում է, լսւում է, անձրեսում է, մթնում է, լուսանում է և այլն:

## Ա Ն Կ Ա Ն Ո Ն Բ Ա Յ Ե Բ

§ 74. Այն բայերը, որոնք շեղւում են խոնարհումների ընդհանուր կանոնից, կոչւում են անկանոն (неправильный):

Անկանոն են՝

1) Թալ բայը, որի կատարեալը, հրամայականը, ներկայ և անցեալ գերբայները կազմւում են ուրիշարմատից: —

Կատ. եկայ, եկար, եկաւ, եկանք, եկաք, եկան: Հրամ. եկ (արի), եկէք:

Դերը. ներկայ՝ եկող: Դերը. անցեալ՝ եկել (եկած):

2) Ուտել բայը, որի կատարեալը, հրամայականը և անցեալ գերբայը կազմւում են ուրիշ արմատից: —

Կատ. կերայ, կերար, կերաւ, կերանք, կերաք, կերան:

Հրամ. կեր, կերէք:

Դերը. անցեալ՝ կերել (կերած):

3) Լալ և տալ բայերը, որոնց սահմանականի ներկան և անկատարը՝ ում վերջաւորութեան փոխա

րէն՝ անորոշ դերբայի վրա ընդունում են իս:—  
լալ-իս եմ, տալ-իս եմ: լալ-իս էի, տալ-իս էի:

Սահմանականի ներկայում և անկատարում նոյն  
իս վերջաւորութիւնը ընդունում է և զալ բայը:—  
Գալ-իս եմ, գալ-իս էի:

4) Ունենալ և զիտենալ բայերը, որոնց սահմա-  
նականի ներկան և անկատարը զբարար ձևով է լի-  
նում:

Ներկայ	Ունիմ, ունիս, ունի, ունինք, ունիք, ունին:
	Գիտեմ, գիտես, գիտէ, գիտենք, գիտէք, գիտես:
Անկատ.	Ունէի, ունէիր, ունէր, ունէինք, ունէիք, ունէին:
	Գիտէի, գիտէիր, գիտէր, գիտինք, գիտէիք, գիտէին:

5) Կամ՝ պակասաւոր բայը, որ զործ է ածւում  
զբարարի ձևով և ունի միայն սահմանականի ներկայ  
և անկատար ժամանակները:—

Ներկայ՝ կամ, կաս, կայ, կանք, կաք, կան:  
Անկատ՝ կայի, կայիր, կար, կայինք, կայիք,  
կային:

Ծանօթութիւն:—Նել, նալ, չնլ վերջացած բայերը կատա-  
րեալում, հրամայականում և անցեալ դերբայում կորցնում  
ն ն և տառերը:—Գտնել, գտայ, գտիր, գտած:

Դառնալ, դարձայ դարձիր, դարձած:  
Փախչել, փախայ, փախիր, փախած:

### § 75. ԲԱՅԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1) Եմ բայի եղակի երրորդ և յոգնակի երկրորդ  
դէմքը ներկայում գրւում է է-ով:—Նա է, կարդում  
է: Դուք էք, կարդում էք:

Ներկայի միւս ձևերում, թէպէտլուում է է, բայց  
գրւում է եւ:—Ես եմ, կարդում եմ: Դու ես, կար-  
դում ես: Մենք ենք, կարդում ենք: Նրանք են, կար-  
դում են:

2) Եմ բայի անկատարի բոլոր ձևերը գրւում են  
է-ով:—Էի, էիր, էր, էինք, էիք, էին:

3) Ել վերջացած բայերի կատարեալի բոլոր ձևե-  
րը գրւում են ե-ով:—Գրեցի, գրեցիր, գրեց, գրե-  
ցինք, գրեցիք, գրեցին:

4) Անալ վերջացած բայերի անցեալ կատարեալի  
եղ. առաջին դէմքում լսուում է ցա, բայց գրւում է  
ցայ (հասկացայ). իսկ երրորդ դէմքը վերջանում է  
ցաւ (հասկացաւ):

5) Կը մասնիկը գրւում է բայից ջոկ և խառը:—  
Կը գրեմ, կըգրէի:

Իսկ երբ բայը ձայնաւոր տառով է սկսւում, կը  
մասնիկի ը տառը բաց է թողնւում և նրա տեղ դըր-  
ւում է ապաթարց (') նշանը:—Կասեմ, կ'երթայի:

6) Ել վերջացած բայերի ստորագասական ապառ-  
ակին իր վերջում ընդունում է եմ՝ բայիներկայի ձևե-  
րը:—(Որ, եթէ) գրեմ, գրես, գրէ (գրի), գրենք,  
գրէր, գրին:

Իսկ ատորագասական և պայմանական անկատարը  
ընդունում է նոյն եմ՝ բայի սահմանական անկատարի

ձեւը:—(Որ, եթէ, կը, պիտի) գրէի, գրէիր, գրէր,  
գրէինք, գրէիք, գրէին:

7) Ալ և անալ վերջացած բայերի ապառնին ե-  
ղակի երրորդ գէմքում վերջանում է այ:—Նա կար-  
դայ, հասկանայ:

8) Վերեկի ուղղագրութեան հետ չը պէտք է շփո-  
թել ալ վերջացած բայերի հրամայականը, որ եզա-  
կիում վերջանում է ա շեշտով, առանց յ տառի:—  
Կարդա, գնա:

Հրամայականի յոգնակին բոլոր բայերի համար  
ընդունում է էք վերջաւորութիւնը շեշտով:—Գրեցէք,  
կարդացէք, հասկացէք:

9) Ներկայ դերբայի վերջում թէպէտ լսում է  
օդ, բայց գրւում է ող:—Գրող, կարդացող:

10) Զը մասնիկը գրւում է բայից ջոկ և խառը:—  
Զը գրել, շըգրեցի:

Իսկ երբ բայը սկսում է ձայնաւորով, շը մաս-  
նիկի ը տառը բաց է թողնւում և նրա տեղ գրւում  
է ('):—Զասել, չասացի:

Ներկայում և անկատարում չ' միանալով եմ բա-  
յի հետ, գրւում է առանց ('):—Զեմ, չես, չէ (չի),  
չենք, չէք, չեն, չէի, չէիր, չէր, չէինք, չէիք, չէին:

11) Բաղադրեալ բայ կազմող բառերը գրւում են  
միմեանցից ջոկ:—Պար գալ, կուլ տալ, ձայն տալ,  
աչք ածել:

12) Բարդ բայ կազմող բառերը միանում են մի-  
մեանց հետ այօդակապով:—Պատւասիրել, վարձատրել:

## Մ Ա Կ Բ Ա Յ

§ 76. Առարկաների գործողութեան կամ դրու-  
թեան հանդամանքները ցոյց տւող բառերը կոչում  
են մակրայ (հարթութեան):

**Մակրայները լինում են՝**

1) Տեղական՝ ուր, որտեղ, հեռու, մօտիկ, այս-  
տեղ, այստեղ, վերև, ներքև, ներսը, դուրսը և այլն:

2) Ժամանակական՝ երբ, այժմ, յետոյ, այսօր,  
երէկ, վաղուց, երբեմն, երբէք, միշտ և այլն:

3) Որակական՝ ինչպէս, այսպէս, այդպէս, այն-  
պէս, սաստիկ, սիրով, եղբայրաբար, հայերէն և այլն:

4) Քանակական՝ որչափ, ինչքան, այսքան, այդ-  
քան, այնքան, շատ, սակաւ, քիչ և այլն:

**Շատ մակրայներ առաջ են գալիս՝ ա) գոյական-  
ներից, բ) ածականներից և գ) կերանուններից:**

ա) Գոյականներից առաջ եկած մակրայները, ե-  
թէ տեղական են, կարող են հոլովել Ա. հոլովման  
պէս:—Վերև, վերևի, վերևից, վերևով և այլն:

բ) Ածականները, բայի վերայ դրւելով՝ դառնում  
են մակրայ:—Լաւ երգել, բարձր խօսել, խոր մասձել:

**Որակական ածականներից առաջ եկած մակրայ-  
ներն ունեն համեմատութեան աստիճաններ:—Լաւ եր-  
գել աւելի լաւ երգել, ամենից լաւ երգել:**

գ) Դերանուններից կազմւած մակրայները, ըն-  
դունելով պէս վերջաւորութիւնը, ունենում են գոր-  
ծիական հոլեվ:—Այսպէս—այսպիսով:

§ 77. ՄԱԿԲԱՑՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1) Եմն վերջացած մակբայները գրւում են  
եռպի:—ուրեմն, երբեմն:

Իսկ եղբէք գրւում է չ-ով:

2) Երէն վերջաւորութեան մէջ ձայնաւորներից  
առաջինը լինում է ե, իսկ երկրորդը՝ է:—Հայերէն,  
ուուներէն:

3) Պէս և օրէն վերջացած մակբայները գրւում  
է-ով:—Վերջապէս, բարոյապէս, կուրօրէն:

Վարժութիւն:—1. Հետեւալ նախադասութիւններից ջո-  
կեցէք մակբայները և որոշեցէք նրանց տեսակը.

Կոռնկլ, ուստի կու գաս, ծառայ եմ ձայնիդ: Կարկա-  
ջանոս աղբիւրն այնտեղ թաւալում էր մարզարիտ. նա յըս-  
տակ էր, որպէս բիւրեղ: Արի, բարձրացիր հնութեան փո-  
շուց, դու իմ հայ լեզու՝ մոռացւած վաղուց: Ո՞ւր էք վա-  
գում, զուր էք վաղում, էյսարսափած երէներ: Մնացի մենակ,  
հոգիս վրդուլած: Եւ այնուհետև ամեն իրիկուն մնում եմ  
լուսնի խաղաղ ծագելուն: Լաւաշակերտը լաւէ սովորում: Վատ  
մարդը Զատկին էլ վատ կը լինի: Մանիր թելեր հաստ ու բա-  
րակ: Ճըլը՝ ւըզտ, ճըլը՝ ւըզտ, ճախարակ, ևս հաստ մանեմ, զու  
բարակ: շատ մանողին շալ շապիկ, քիչ մանողին չիթ շապիկ:

2. Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետեւալ  
մակբայներով.

Գիշերը, ցերեկով, ամառը, միշտ, առաւօտը, մայի-  
սին, վերե, ներքե, քաղցր, եղբայրաբար, այսքան, սակաւ,  
երբէք, բոլորովին, հայերէն, մանր-մանր, բարձր-բարձր,  
օրէցօր, էգուց:

Ն Ա Խ Դ Ի Բ Ե Յ Ե Տ Ա Դ Ի Բ

§ 78. Այն հոլովառու բառերը, որոնք ցոյց են  
տալիս առարկաների փոխադարձ յարաբերութիւնը,  
կոչւում են նախղիր (предлогъ) և յետաղիր (послѣ-  
логъ):—

Աշակերտը գնաց դէպի (նախղիր) տուն:  
Հայրը գնեց որդու համար (յետաղիր) մի գիրք:  
Նախղիրը գասւում է հոլովական բառից առաջ,  
իսկ յետաղիրը՝ հոլովական բառից յետոյ:  
Նախղիրներ՝ առանց, գէպի, մինչև, բացի...  
Յետաղիրներ՝ համար, հետ, մօտ, մէջ...  
Գոյականներից առնւած յետաղիրները հոլովուում  
են գոյականների Ա. հոլովման օրինակով:—  
Մէջ, միջի, միջից, միջով, մէջերը և այլն,  
Տակ, տակի, տակից, տակով, տակերը և այլն:  
Վրայ, վրայի, վրայից վրայով, վրաները և այլն:  
Կան բառեր, որոնք կարող են լինել և յետա-  
ղիր և մակբայ: Եթէ բառը գոյականի մօտ է  
դրւած, յետաղիր է, իսկ եթէ բայի մօտ է՝  
մակբայ է:

Սեղանի վրայ (յետաղիր) գիրք է դրւած:  
Գիրքը դրեց վրան (մակբայ):

§ 79. ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ԵՒ ՅԵՏԱԴԻՐՆԵՐԻ  
ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԵՐ

1) Մէջ գրւում է չ-ով, թէպէտ լսւում է չ:  
Հողովելիս՝ է տառը եզակիում դառնում է ի:—Միջի,  
միջով, միջով և այլն:

2) Վրայ կարելի է գրել և առանց յ-ի:

3) Իրջեւգրւում է ը-ով, բայց կարդում ենք իփրեւ:

4) Դէպի գրւում է է-ով:

Վարժութիւն:—1. Հետեւալ նախադասութիւններից ջուցելք նախդիրները և յետադիրները.

Դէպի մուր, ինձ ասա, թոչում ես այդպէս արագ: Խոր ձորի մէջ գնում եմ ես, պարզ գիշեր է աստեղադարդ: Մայրենի լեզն, մայրենի բարբառ, ախորժ, ընտանի եմ հողու համար: Ճաշից յետոյ եղբայրը քրոջ հետ գնաց այդին: Եղբայրս ծառի տակին, սաղմոսը կռան տակին: Մինչև սեպտեմբեր վերջանում են ամառային արձակուրդները: Բացի ամարային ամիսներից, մենք միշտ գնում ենք ուսումնարան: Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ, ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսալ: Տղայ, աղջիկ ուրախ, զւարժա փթթեցան զերդ մայիսի վարդ:

2) Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն հետեւալ նախդիրները և յետադիրները.

Դէմ, իբր, զատ, մօտ, ներքել, փոխանակ, մինչև, դէպի, բացի, վերել, առաջ (առջև), յետոյ, համար, տակ, վրայ:

Շ Ա Ղ Կ Ա Պ

§ 80. Նախադասութիւնները և նախադասութեան անդամները միմեանց հետ կապող բառերը կոչւում են շաղկապ (союзъ):

Ես գրւում եմ, իսկ դու կարդում ես:  
Գիրքը եւ մատիտը սեղանի վրա են:  
Ամենագործածական շաղկապներն են՝ եւ (և) կամ ու, նաեւ, այլեւ, էլ, կամ (կամ թէ), եթէ (թէ), որ,  
թէեւ, (թէպէտ), այլ, որպէս զի, քան (քան թէ) և այլն:

§ 81. Շ Ա Ղ Կ Ա Պ Ն Ե Ր Ի ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԵՐ

- 1) Եւ կարող է գրւել և:
- 2) Ու շաղկապից առաջ բառի վերջում ը-ի տեղ գրւում է ն:—Հայրն ու որդին:
- 3) Թէ, թէեւ, թէպէտ գրւում են է-ով:

Վարժութիւն:—1. Հետեւալ նախադասութիւններից ջուցելք շաղկապները.

Մարդ և անասուն, գազան և թոչուն, ամենքն էլ իրանց գործին են գնում: Մերկ ու թուլակաղմ եկար այս աշխարհ և մօրդ գրկում կ'առնէիր հանգիստ: Բայց միայն, աւազ, մահը տարածած տառապեալ մօրդ գրաւ զերեզման: Դու տեսէլ ես երկնքումը պայծառ լուսին ծագելիս, կամ թէ կանաչ տերեկի մէջ կարմիր ծիրան փայլելիս: Թէև դու քօրսայի ես զարդ բայց քեզ տակաւին չեմ ասիլ մեծ մարդ:

2. Գրեցէք մի-մի նախադասութիւն հետեւալ շաղկապներով:

Իսկ, բայց, ընդհակառակը, այնպէս—ինչպէս, այնքան  
—ինչքան, քան թէ, կամ, արդեօք, եթէ, միայն, թէև, ճիշտ,  
գիցուք, ինչքան որ, որովհետեւ, որպէս զի, ուրեմն:

## ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆ

§ 82. Այն հնչիւնները և բառերը, որոնք արտայայտում են մեր զգացմունքներն ու կիրքը, կոչում են միջարկութիւն կամ ծայնարկութիւն (մеждометие).

- Միջարկութիւններն արտայայտում են՝
- 1) Ուրախութիւն՝ ահ, ուհ, էփ:
  - 2) Ցաւ՝ վախ, վայ, օ, ոհ, ախ:
  - 3) Ափսոսանք՝ ափսոս, աւաղ:
  - 4) Բաղձանք՝ երանի թէ, ուր էր թէ:
  - 5) Զարմանք՝ վահ, օ, ոհ:
  - 6) Երկիւդ՝ վայ թէ, մի գուցէ.
  - 7) Կոշ՝ ով, ո, էյ, հէյ, տօ, ձօ, այ:
  - 8) Խըախոյս՝ կեցցէ, հա, ապրիս:

Կան նմանաձայն ձայնարկութիւններ, որոնք արտայայտում են անշունչ առարկանների և կենդանիների հնչիւնները: — Զը՞նգ, զը՞նգ, չը՞նկ, չը՞նկ, մեաւ (կատու). համ-համ (շուն) և այլն:

## ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

- 1) Միջարկութիւնների գլխին դրւում է երկար (՝ կամ շեշտ (՝): — Ա՛խ, վայ, տօ:
- 2) Միջարկութիւնը, եթէ դրւած է նախադասութեան սկզբին կամ վերջին, միւս անդամներից բաժանւում է ստորակէտով: Իսկ եթէ նախադասութեան միջին է, երկու կողմից առնում է ստորակէտ: —

Ա՛խ, թոփը, ծիծեռնակ, ծնած տեղս Աշտարակ: Որքան դժբաղդ եմ ես, անս: Հերոսը, աւանդ, այլ ևս չը կայ:

Վարժութիւն. — 1. Հետևեալ նախադասութիւններից ջոկեցք միջարկութիւնները:

Զայն տուր, ով ծովակ, ինչու լոռում ես: Ես լսեցի մի անուշ ձայն, ախ, ափսոս, որ երազ էր: Ուխայ, ուխայ, սիրուն հովիւ, քունդ անուշ: Երանի, գարուն լինի տարին բուլոր ժամանակ: Ժամը տւին — տաճ-դօ, տաճ-դօ. Կովը կթենք, թը՛ռ, թը՛ռ կաթ տայ: Բաղէ, թը՛ռո, բաղէ, թը՛ռո... Պառաւ նանը զարթնում է, տա, տա, տա, պա, պա, պա:

2. Գրեցք մի քանինախադասութիւններ հետևեալ միջարկութիւններով:

Կեցցէ, ապրիս, վայ, մի գուցէ, էյ, այ, երանի, տօ, օ, ծիւ-ծիւ:

## Յ Ա Խ Ե Լ Ի Ա Ռ

### ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

§ 1. ՀԱՄԱՌՈՏ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ: Համառոտ կոչւում է այն նախադասութիւնը, որի մէջ կամ միմիայն գլխաւոր անդամներ:—Աշակերտը գրում է:

Իսկ ընդարձակ կոչւում է այն նախադասութիւնը, որի մէջ բացի գլխաւոր անդամներից՝ կան և երկրորդական անդամներ:—Աշխատասէր աշակերտը դասարանում գրում է իր դասը:

§ 2. ԴԻՄԱԽՈՐ ԵՒ ԱՆԴԵՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ: Դիմառո կոչւում է այն նախադասութիւնը, որի մէջ ենթական յիշուում է կամ իմացւում է մըտքով:—Աստիած ծուլութիւն չի սիրում երբէք: Խելօք մանուկներ, (ղուլք) ձեր գրքերն առէք:

Իսկ անդէմ կոչւում է այն նախադասութիւնը, որի մէջ ենթական անյատ է:—Ասում են, որ ամենայն մարդ մի աստղ ունի երկնքում: Լուսացաւ, լուսացաւ, լուսն է բարին: Ամպել է, ձիւն չի գալիս:

§ 3. ՊԱՐՁ ԵՒ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ: Պարզ կոչւում է այն նախադասութիւնը, որ միայն մի պարզ միտք է արտայայտում:—Մըջիւնը բերնով իր կերն է տանում:

Իսկ բարդ կոչւում է այն նախադասութիւնը, որ կազմւած է երկու կամ աւելի նախադասութիւններից:—Ինչ կը ցանես, այն կը հնձես:

Բարդ նախադասութիւնը կազմւում է՝ զլիաւոր ու երկրորդական, միաւորեալ, յաւելեալ և միջանկեալ նախադասութիւններից:

§ 4. ԳԼԽԱԽՈՐ ԵՒ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱ-ՍՈՒԹԻՒՆՆԵՐ: Գլխաւոր կոչւում է այն նախադասութիւնը, որից կախում ունի ուրիշ նախադասութիւն. իսկ երկրորդական կոչւում է այն նախադասութիւնը, որ կախում ունի գլխաւորից և պարզաբանում է նրա մի որեկիցէ անդամը:—Մանիք թելեր հաստ ու բարակ, որ ես հոգամ իմ ցաւեր:

Այս օրինակում գլխաւոր նախադասութիւնն է մանիք թելեր հաստ ու բարակ, իսկ երկրորդականը՝ որ ես հոգամ իմ ցաւեր:

Երկրորդական նախադասութիւնը գլխաւորապէս լինում է.

ա) Յատկացուցիչ:—Այն գետը, որ անցնում է Թիֆլիսի միջով, կոչւում է Կուր:

Եթէ այս բարդ նախադասութիւնը կրճատենք, երկրորդական յատկացուցիչ նախադասութիւնը կը դառնայ յատկացուցիչ բառ:—Թիֆլիսի միջով անցնող գետը կոչւում է Կուր:

բ) Լրացուցիչ:—Որդին լսում է, ինչ որ ասում են ծնողները:

Եթէ այս բարդ նախադասութիւնը կրճատենք, երկրորդական լրացուցիչ նախադասութիւնը կը դառ-

նյա լրացուցիչ բառ: — Որդին լսում է ծնողների ասածը:

գ) Պարագայական: — Ուտեղ կայ սէր, այնտեղ կայ միաբանութիւն: Զիւնը հալւում է, հէնց որ տաքանում է եղանակը: Ամեն մարդ աշխատում է, որ առաջ գնայ:

Եթէ այս բարդ նախադասութիւնները կրճատենք, երկրորդական պարագայական նախադասութիւնները կը դառնան պարագայական բառեր: — Մէր եղած տեղում կայ միաբանութիւն: Զիւնը հալւում է եղանակը տաքանալուն պէս: Ամեն մարդ աշխատում է առաջ գնալու:

Ինչպէս տեսանք, երկրորդական նախադասութիւնը բաժանւում է գլխաւորից ստորակէտով. իսկ եթէ նա լինում է գլխաւոր նախադասութեան անդամների մէջ, երկու կողմից է ստորակէտ առնում:

Երկրորդական նախադասութիւնը գլխաւորից բաժանելու համար երբեմն դրւում է բութ ('): — Պատմեց պառաւին՝ թէ ինչ բան տեսաւ:

Բութը բացի գրանից դրւում է թւարկութիւնների, բացատրութիւնների ու բառերի զեղջման ժամանակ: — Տարին ունի չորս եղանակ՝ գարուն, ամառ, աշուն և ձմեռ: Նա բերաւ իր հետ մի ոսկէ ձկնիկ՝ ձկնաց արքայի գուստը գեղեցիկ: Մարտը տալիս է ձնծաղիկ, ապրիլը՝ կապոյտ մանուշակ:

Բութը դրւում է նաև, երբ ուզում ենք չը շփոթել նախադասութեան զանազան անդամները միմեանց հետ: — Եւ նա ուժասպառ՝ խոտերի միջին՝ յուսահատ, տխուր՝ լալիս էր անվերջ:

§ 5. ՄիԱՀՈՐԵԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ: Միաւորեալ կոչւում է այն նախադասութիւնը, որը կազմած է երկու կամ աւելի պարզ նախադասութիւնների միաւորութիւնից: — Արեն էլ վաղուց ելաւ, բարձրացաւ:

Այս նախադասութիւնը կազմւած է երկու պարզ նախադասութիւնների միաւորութիւնից՝ 1) Արեւն էլ վաղուց ելաւ, 2) Արեն էլ վաղուց բարձրացաւ:

Միաւորեալ նախադասութեան մէջ մի ենթակայի հետ կարող են լինել երկու կամ աւելի ստորոգեալներ, մի ստորագեալի հետ՝ երկու կամ աւելի ենթականեր, մի ենթակայի կամ ստորոգեալի հետ՝ երկու կամ աւելի միատեսակ երկրորդական անդամներ: — Զի, ոչխար, գառնուկ, այծ, ուլ, հորթ ու կով գնացին իրանց գործին շտապով: Արել յաղթեց ամպերին, շղթը ձգեց սարերին: Խեղճ որբիկը չ'ունէր հայր, մայր, եղբայր ու քոյր: Նա անտուն, անտէր, բաղցած ու ծարաւ թափառում է փողոցներում: Դեկտեմբերին, յունւարին և փետրարին ձմեռ է լինում:

Միաւորեալ նախադասութեան մէջ վերջին ևնախավերջին միատեսակ անդամների մէջ դրւում է ու կամ եւ. իսկ միւս միատեսակ անդամները բաժանւում են իրարից ստորակէտով:

§ 6. ՅԱՀԵԼԵԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ: Յանելեալ կոչւում է այն նախադասութիւնը, որ կազմւած է ուրիշ բառերից: — Մի օր տգեղն ասում է միւսին. «Երթանը ծովի ափ, քոյրիկ, միասին»:

Այս օրինակում Մի օր տգեղն ասում է միախն գլուխաւոր նախադասութիւն է, իսկ «Երթանք ծովի ափ, քոյրիկ, միասին»՝ յաւելեալ:

Յաւելեալ նախադասութեան սկզբում դրւում է միջակէտ եւ չակեցտ («), իսկ վերջում՝ չակերտ և վերջակէտ (»):

Հարց ու պատասխանների ժամանակ, չակերտների տեղ կարող է գործ ածւել անջատման զիծ(—), որ դրւում է յաւելեալ նախադասութեան առաջ, օրինակ:

—Են մէկ հաւ կար հւր գնաց:  
—Ծարաւ աղբըում կուլ գնաց:

Ծանօթութիւն:—Միջակէտը դրւում է նաև անկախ նախադասութիւնների մէջ:—Աշուն է խորին. ծիծառը թռաւ. անտառն է դատարկ. դաշտը մերկացաւ:

Զակերտների մէջ են առնեում նաև գրւածքների և թերթերի անունները:—«Վէրք Հայաստանի» վէպը գրել է և. Արովեանը: «Մեր հայրենիքը» լաւ երգ է: «Բաղմավէպը» հրատարակում է սուրբ Դաղարի վանքում:

§ 7. ՄիջԱՆԿԵԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ: Միջանկեալ կոչւում է այն անկախ նախադասութիւնը, որ՝ իբրև ծանօթութիւն, գցւած է մի ուրիշ նախադասութեան մէջ:—Պետերբուրգը, ինչպէս յայտնի է, Ռուսաստանի մայրաքաղաքն է: Եւ գնաց տեսաւ (ըստ Բնշ տեսնի լաւ, որ արդար լինի եւ ոչ անիրաւ), հին խուղի շէմքում պառաւը նստած:

Միջանկեալ նախադասութիւնը միւսներից բաժանում է ստորակէտներով կամ լիակագծով ( ):

Լարժութիւն:—Վերլուծեցէք հետեւեալ նախադասութիւնները.

Աշունը եկաւ: Թափւեցաւ սաղարթ: Լոեց: Ամպերը եկան, ծածկեցին: Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր, հոգով դեռ արի, գլխով ալւոր: Մօր համար բոլոր որդիքը սիրելի են: Անձրւում է: Մթնում է: Վարդը, մանուշակը և մեխակը անուշահոտ ծաղիկներ են: Ահա մէկ օր էլ ծերը գնաց ծով, որ ձուկը որսայ իր մաշւած ցանցով: Սիրուն թիթեռ, ինձ ասա՞ թէ ինչով ես դու ապրում: Այն աշակերտը, որ աշխատում է, արժանի է գովեստի: Որտեղ հաց, այնտեղ կաց: Այդ զարհութելի ձայնիցը դաժան (ոչ որոտ մունք էր և ոչ էլ գազան) լեռներ ու ձորեր դղրդում էին: Կանչեց կիսամեռ սիրունը ջրից: «Քոյրիկ, իմ քոյրիկ, փրկէ ինձ մահից»:

§ 8. ՀԱՐՑԱԿԱՆ, ԲԱՑԱԿԱՆՉԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ: Հարցական կոչւում է այն նախադասութիւնը, որի մէջ կայ հարց:—Ինչու ձրկանց հետ պար չես բռնում մանկական: Հիմի էլլունքը: Հարց պարունակող բառի գլխին դրւում է հարցական նշան (°):

Բացականչական կոչւում է այն նախադասութիւնը, որի մէջ կայ բացականչութիւն:—Օ՛, ծանր հոգսերի խղճուկ զաւակներ, որքան համբերող, քաջ է ձեր հոգին:

Բացականչութիւն պարունակող բառի գլխին դրւում է երկար (°):

Պատմական կոչւում է այն նախադասութիւնը, որի մէջ, առանց հարցի կամ բացականչութեան, հանգարտ պատմում է մի բան:—Չիւն էր գալիս փաթիլ-փաթիլ, հետն էլ անձրկ կաթիլ կաթիլ:

# ՑԱՆԿ

## ԵՐԵՍ

§§ 1—3.	Հնչիւններ և տառեր	5
§§ 4.	Վանկ և լառ	7
§ 7.	Բառերի կազմութիւնը	9
§§ 8—16.	Ուղղագրական գիտելիքներ	10
§ 17.	Տողադարձի կանոնները	20
§§ 18—19.	Նախադասութիւն	21
§ 20.	Բանի մասեր	26
§§ 21—22.	Առարկայ և նրա տեսակները	27
§§ 23—34.	Գոյական անուն և նրա հոլովումները	28
§ 35.	Անկանոն հոլովում	37
§ 36.	Փոխւող և կորչող գրեր	39
§ 37.	Գոյականների ուղղագրութիւնը	40
§§ 38—40.	Ածական անուն և նրա փոփոխումները	41
§ 41.	Ածականների ուղղագրութիւնը	43
§ 42.	Դերանուն և նրա տեսակները	45
§ 43.	Դերանւանական յօդեր	45
§§ 44—50.	Դերանունների հոլովումը	46
§ 51.	Դերանունների ուղղագրութիւնը	50
§ 52.	Թւական անուն և նրա տեսակները	51
§ 53.	Թւականների փոփոխումները	53
§ 54.	Թւականների ուղղագրութիւնը	54
§§ 55—60.	Բայ. սեռ, ժամանակ, դէմք, թիւ	55
§ 61.	Դերբայ	60
§ 62.	Բայի ձեռերի կազմութիւնը	62
§§ 63—67.	Խոնարհում	62
§ 68.	Կրաւորական բայեր	72
§§ 69—70.	Բացասական բայեր և նրանց խոնարհումը	73
§ 71.	Դերբայներից կազմւ. բաղադր. ժամանակներ	76
§ 72.	Անցողական բայեր	78
§§ 73—74.	Մնդէմ և անկանոն բայեր	78
§ 75.	Բայերի ուղղագրութիւնը	81
§ 76.	Մակբայ և նրա ուղղագրութիւնը	83
§ 78.	Նախդիր և յետադիր	85
§ 79.	Նախդիրների և յետադիրների ուղղագրութ.	86
§ 80.	Շաղկապ և նրա ուղղագրութիւնը	87
§ 82.	Միջարկութիւն և նրա ուղղագրութիւնը	88
§§ 1—8.	Նախադասութիւնների տեսակները	90

# ՀՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

Յարութիւն Թումանեանի

1) ԽՈԼԵՐ, ՎՈՂԵՎԻԼ . . . . .	20	Կոպ.
2) ԱՐԻՈՒԹԵՈՆ ԹԵՒԵՐԸ (Թարգմ.) . . . . .	30	"
3) ԱՄՈՒՐԻՆ (Աակաւաթիւ) . . . . .	20	"
4) ՀԱՆԱՔ ՈՒ ԴԱՆԱԿ (Աակաւաթիւ) . . . . .	30	"
5) ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ (Աակաւաթիւ) . . . . .	50	"
6) ՄԵԼԻՔ-ԲԵԳԱԱՐ, պատմ, պօէմ (Աակաւաթիւ)	10	"
7) ՄԵԼԻՔ-ԻՒՍՈՒՓ, " "	20	"
8) ՄՈՒՍԱ, պատմ. պօէմ I նուադ	20	"
9) ՄՈՒՍԱ, " " II " . . . . .	20	"
10) ՆՈՒԱԳՆԵՐ . . . . .	30	"
11) ՀԱԶԱՐԱՆ-ԲԼԲՈՒԼ, ՓԷՒՐԻՄ 3 արարւածով .	30	"
12) ԱՐՏԱՒԱԶԴԻ Բ. պատմ. ՓԷՒՐԻՄ 4 պատկելով	30	"
13) ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԱՂԻՒՍԱԿ . . . . .	3	"
14) ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ . . . . .	75	"
15) ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ . . . . .	1 ռ.	"
16) ԱՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ Գ. ապագրութիւն . . . . .	40	"
17) ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ . . . . .	40	"

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊ.



Դիմել՝ Թիֆլիսի գրավաճառներին կամ հեղինակին՝  
Տիֆլիս, Չավչավաձևսկայ, № 25 ա,

Արդյուն Տումանյան.

6326